Azg Ազգ

23 ՅՈՒՆԻՍ 2012 ՇԱԲԱԹ 113(4966)

ISSN: 1829-1651

Ընդդիմադիր եւ «այլընտրանք» քաղաքական ուժերին «մանրումները» չեն հետաքրքրում

Նրանց նպատակը վարչապետին չեզոքացնելն է

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կառավարության նոր ծրագրի բուռն քննարկումն Ազգային Ժողովում որպես քաղաքական գործընթաց բնականոն ու նորմալ կարելի էր համարել: Սակայն քննարկման ընթացքը եւ բովանդակությունը մի կողմից զավեշտալի էին, մյուս կողմից՝ անընդունելի:

Զավեշտալի էր, քանի որ կառավարության նոր ծրագիրը ներկայացնող վարչապետ Տիգրան Սարգսյանին մեղադրում էին մեր երկրի անցած 20 տարիների բոլոր մեղքերի մեջ: Դաշխարհագրական կեցվածքի ընդունածները, իշխանության կողմից հավելյալ մեկ տոկոս նվեր ստանալու շնորհիվ խորհրդարանում հայտնվելով, ինքնամոռացման գիրկն ընկած, այնքան էին ոգեւորվել, որ մի պահ կարող էր թվալ, թե նրանք իսկապես մտահոգված են ժողովրդի դարդ ու ցավերով: Պատկերացնո՞ւմ եք, երկրի արդյունաբերությունը քարուքանդ անող նախկին վարչապետը կամ ընտրությունների կեղծման համակարգի հիմնադիր նախկին ԿԸՀ փոխնախագահը, որն ապա զինվորական դատախազ դարձավ, մտածում են ժողովրդի սոցիալական վիճակի, աղքատության եւ արտագաղթի մասին: Իսկապես որ անեկդոտի պես է հնչում:

Զավեշտ էր նաեւ նախկին կոալիցիոն գործընկեր ԲՀԿ-ականների հախուռն քննադատությունը, գործընկերներ, որոնց ներկայացուցիչները ղեկավարել են բյուջեի ամենամեծ ծախսերն ունեցող նախարարությունները՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերի, առողջապահության, քաղաքաշինության, երիտասարդության եւ սպորտի: Վարչապետ չդարձած նախկին արտգործնախարարը, ՀՀՇ-ական գլխավոր թերթի նախկին լրագրողուհին եւ մյուսները ոչ առանց իրենց առաջնորդի խրախուսման, հանկարծ սկսեցին քննադատել կառավարության գործունեությանը, որի անդամն են ընդամենը մեկ ամիս առաջ եղել իրենց կուսակցության ներկայացուցիչները 5 տարի շարունակ: Այդ 5 տարիներին, կառավարության աշխատանքը լուսաբանող լրագրող լինելով, չեմ հիշում, թե նրանցից որեւէ մեկը սկզբունքային դիրքորոշում ունենար կառավարության հավանությանն արժանացած որեւէ հարցի առնչությամբ եւ, ի նշան անհամաձայնության, դուրս գար կառավարությունից կամ քննադատեր վարչապետին եւ կառավարության անդամ իրենց մյուս գործընկերներին:

Անընդունելի էր, երբ կառավարության նոր ծրագրի քննարկումը վերածվում էր հերթական ամբոխավարական հանրահավաքի, որտեղ կարելի է ասել ամեն ինչ: Անձնական մեղադրանքները եւ զրպարտություններն ուղղված էին կոնկրետ մի մարդու՝ Տիգրան Սարգսյանի դեմ: *Տես էջ 3*

Ֆազիլ Մուսաֆաեւի հերքումը հարցականների տեղ է թողնում

Թուրքիայի նախագահ Օզալի մահվան հանգամանքների վերաբերյալ վերջին տեղեկատվությունները, ըստ ամենայնի, Ադրբեջանի իշխող վարչախմբին անհանգստություն են պատճառել: Թուրքական մամուլը գրել է, որ «Օզալին սպանողը գտնվում է Ադրբեջանում», եւ անգամ հրապարակել է վերջինիս անունը: Այդ առթիվ մենք ենթադրել էինք, որ Օզալի մահվան մեջ Ադրբեջանում կարող էր շահագրգռված լինել նա, ով բոլոր միջոցներով ձգտում էր Էլչիբեյի տապալմանը, եւ դա Հեյդար Ալիեւն էր:

Թեմային modern.az-ի խնդրանքով անդրադարձել է Ադրբեջանի Միլլի մեջլիսի պատգամավոր Ֆազիլ Մուսաֆաեւը, որ նշված ժամանակ՝ 1992-93 թթ., աշխատել է նախագահի աշխատակազմի պետարիավական բաժնի վարիչի տեղակալի պաշտոնում: Նա ասել է, որ «ադրբեջանական թույլ հատուկ ծառայությունները չէին կարող թունավորել Օզալին»: Սա, խոստովանենք, անհամոզիչ է հնչում: Մուսաֆաեւը թերեւս ինքն էլ հասկացել է, որ չափազանց խախուտ «հիմնավորում» է բերում եւ փորձել է տեսակետն «ամրապնդել»:

Շահախոսությունը, սակայն, երեւակել է Մուսաֆաեւի «մեկնաբանությունների» չհիմնավորվածությունը եւ ծնել հարցականներ: Այսպես, նա տառացիորեն ասել է. «Ադրբեջանի այն ժամանակվա իշխանությունը Թուրգութ Օզալի մահով կորցրեց իր մեծ աջակցին: Այս տեսակետից այդ հանցագործության մեջ իշխանությունը դեր ուներ չէր կարող: Այսօր հստակ ապացույց չկա՝ Թուրգութ բեյը թունավորվել է Բաքվո՞ւմ, թե՞ Թուրքիայում: Դա դեռեւս պետք է ապացուցվի»:

Թուրքական մամուլը չի գրել, որ «Օզալին ադրբեջանական իշխանությունները կամ հատուկ ծառայություններն են թունավորել»: Չի ասվել, որ դա տեղի է ունեցել Բաքվում: Իսկ Ֆազիլ Մուսաֆաեւը, ինչպես տեսնում ենք, Օզալի մահվան պատասխանատվությունը հեռացնում է ոչ թե առհասարակ ադրբեջանական կողմից, այլ միայն՝ այդ պահի իշխանությունից, որի համար իրոք այդ մահը ծանր կորուստ էր:

Մուսաֆաեւը չի հերքում եւ չի էլ կարող հերքել, որ Օզալի մահվան մեջ Ադրբեջանում կարող էր շահագրգռված լինել Էլչիբեյին ընդդիմադիր որեւէ ուժ: 1993թ. ապրիլի դրությամբ նման բացահայտ ուժ էր Սուրեթ Հուսեյնովը: Թերեւս դա նկատի ունենալով է, որ Մուսաֆաեւը «ռուս հետախույզի ձեռքի գործ» է անվանում Օզալի սպանությունը: Բայց բոլոր փաստերը եւ հետագա իրադարձությունները վկայում են, որ Սուրեթ Հուսեյնովը աշխատել է Հեյդար Ալիեւի համար: Չէ՞ որ իշխանություններն ստիպված էին Նախիջեւանից Բաքու «հրավիրել» Հեյդար Ալիեւին միայն այն ժամանակ, երբ Հուսեյնովի ապստամբական ուժերը կանգնած էին Ադրբեջանի մայրաքաղաքի մատույցներում: Չէ՞ որ հենց Հուսեյնովն է զբաղեցրել վարչապետի պաշտոնը Հեյդար Ալիեւի ներկայացմամբ:

Ճիշտ է, հետագայում Սուրեթ Հուսեյնովը մեղադրվել եւ դատապարտվել է: Բայց հո չէ՞ր կարող դատարանում հայտարարել, որ Հեյդար Ալիեւի հրահանգով է ամեն ինչ արել: Այդ կարգի գաղտնիքներ ոչ ոք չի հրապարակում: Այնպես որ, Ֆազիլ Մուսաֆաեւը զուր է ջանացել Օզալի մահվան համար պատասխանատվությունը բարդել «ռուս հետախույզի» վրա: Կամ էլ գուցե միտումնավո՞ր է դա արել: Որպեսզի վերոհարադրյալ կարգի հարցադրումներ ծագեն: Խնդիրն, ամենայն հավանականությամբ, Թուրքիայում լուրջ է դրված:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ



Մուբարաքի սիրտը կանգ է առել

Եգիպտոսում տապալված եւ ցմահ բանտարկության դատապարտված նախագահ Հոսնի Մուբարաքը երեկ օրհասական վիճակում էր: Նրա սիրտը կանգ էր առել, եւ բժիշկները չէին կարողացել նրան փրկել: Այդ մասին հայտնել են Ասոշիեյթեդ Պրես գործակալության աղբյուրները:

84-ամյա Մուբարաքի առողջական վիճակը աշխարհի ուշադրության կենտրոնում էր վերջին երեք շաբաթներին՝ այն պահից, երբ նրան ցմահ բանտարկության դատապարտեցին 2011-ի ժողովրդական հուզումների ժամանակ խաղաղ ցուցարարների սպանությանը մեղսակից լինելու մեղադրանքով:

Բանտի հիվանդանոցում, ապա նաեւ զինվորական հոսպիտալում, ըստ որոշ տվյալների, Մուբարաքը անցկացրել էր ինսուլտ եւ ուրշ նոպա: Բայց հետո հայտարարվել էր, թե ինսուլտի նշաններ չեն հայտնաբերվել:

ԱԺ ԵԽԽՎ պատվիրակությունը մեկնում է Ստրասբուրգ

Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակությունը հունիսի 25-29 Ստրասբուրգում կմասնակցի ԵԽԽՎ նստաշրջանի երրորդ մասի աշխատանքին: Պատվիրակության կազմում են Դավիթ Հարությունյանը (ղեկավար), Հերմինե Նաղդալյանը, Նաիրա Զոհրաբյանը, Արմեն Ռուսամյանը եւ Զարուհի Փոստանջյանը (որն արդեն իսկ Ստրասբուրգում է):

Մ. Խ.

Ստուգում են «Սիվիլիթասի» ֆինանսական փաստաթղթերը

«Սիվիլիթաս» հիմնադրամի երեկ տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցները երեկ այցելել են հիմնադրամ եւ պահանջել «Սիվիլիթաս» հիմնադրամի ֆինանսական գործունեության փաստաթղթերը հիմնադրման օրվանից՝ 2008 թվականի մայիսից: Այս պահանջին զուգահեռ՝ հիմնադրամի խորհրդի անդամները եկող շաբաթ հրավիրվել են ԱԱԾ՝ ցուցմունք տալու: Մ. Խ.

Մենդամթերքի անվտանգության հսկողության նոր համակարգ

Սննդամթերքի անվտանգության ոլորտում Հայաստանի օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրոմիության պահանջներին, մասնավորապես աղրանքների ազատ տեղաշարժի դրույթին: Կառավարության այս որոշման առնչությամբ երեկ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ բոլոր սնունդ արտադրող ձեռնարկությունները պետք է ունենան ներքին հսկողություն՝ լաբորատորիաներ: Այդ լաբորատորիաներում նրանք պարբերաբար պարտավոր են ստուգել իրենց արտադրած սննդամթերքը: Սակայն եթե շուկայում հայտնաբերվի որեւէ սննդամթերք, որը վտանգավոր է, տվյալ ձեռնարկությունը կպատժվի: Այս մոտեցումը Տիգրան Սարգսյանը բնութագրեց որպես ձեւական ստուգումից անցում բովանդակային ռիսկերի գնահատմանը: Ա. Մ.

Սեւանի մակարդակն այս տարի եւս բարձրանալու է

Պատասխանելով այն հարցին, թե ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ Սեւանա լճից այս տարի լրացուցիչ ջրի բացթողումը, բնապահպանության նախարար Արամ Հարությունյանն ասաց, որ նախարարության մասնագետների հաշվարկներով, այս տարի եւս լճի բարձրացման ցուցանիշ ենք ունենալու: Նա ներկայացրեց վերջին 5 տարիների ցուցանիշները: Ըստ այդմ՝ 2007-ին լճի մակարդակը բարձրացել է 46 սմ-ով, 2008-ին, երբ Սեւանից դարձյալ լրացուցիչ ջուր թողնվեց, որն ընդհանուր առմամբ կազմել էր 302 մլն խմ, լճի մակարդակը բարձրացավ 6 սմ-ով, 2009-ին՝ 36 սմ-ով, 2010-ին՝ 24 սմ-ով, 2011-ին՝ 47 սմ-ով: Նախարարի հավաստիացմամբ Սեւանի մակարդակն այժմ 1900 մ-ից անցել է, եւ մինչեւ 1903 մ բարձրացման ծրագիրը կկատարվի: Նա միաժամանակ նշեց, որ 320 մլն խմ ջուր բաց թողնելու թույլտվությունը չի նշանակում, թե այդ ամբողջ ջուրը վերցվելու է: Ա. Մ.

«Մուսա լեռներ». Ցեղասպանությունների ուսումնասիրման առաջին միջազգային գիտաժողովը Պրահայում

Ուրացումը ցեղասպանության վերջին փուլն է, ասում է Վահրամ Շմմասյանը

ՀԱԿՈԲ ԱՄԱՏՈՒՆԻ
Պրահա

Երեք օր շարունակ՝ հունիսի 18-20-ը Եվրոպայից, Միացյալ Նահանգներից ու Չինաստանից ժամանած տասնյակ գիտնականներ եւ հետազոտողներ Պրահայի Կարլի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետում քննարկեցին աշխարհում երբեւէ տեղի ունեցած ցեղասպանությունները եւ դրանց ընթացքում արձանագրված հերոսական ինքնապաշտպանության կամ դիմադրության շարժման դրվագները:

«9 դարպաս» փառատոնը, որի միայն մի մասն է «Մուսա լեռներ» գիտաժողովը, հիմնադրվել է 13 տարի առաջ հայտնի պոետ Յիրի Մորդեխայ Լանգերի համանուն պոեմի անունով եւ այս տարի անցկացվեց Չեխիայի Սենատի նախագահ Շտեյխի, Չեխիայի վարչապետ Պավել Նեչասի եւ մի քանի նախարարությունների ու դեսպանատների, այդ թվում՝ Շվեդիայի, Իսպանիայի եւ Չինաստանի դեսպանների բարձր հովանու ներքո:

Փառատոնը ծնունդ է նաեւ այն գաղափարի, որ Պրահան գերմանական, հրեական եւ չեխական մշակույթների լավագույն կամուրջ է, եւ այդ հնարավորությունը պետք է օգտագործել մշակութային բազմազանությունը ցույց տալու համար:

Տես էջ 4

ԱԶԳ **ԸՆԹԱՑԻԿ**

Արդարադատության նախարար. Սպասվում են դատաիրավական լայնածավալ բարեփոխումներ

«Դատաիրավական բարեփոխումներ 2012-2016 թթ., ծրագիրը» նախագահ Սերժ Սարգսյանի մոտ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ արժանացել է հավանության: Արդարադատության նախարար Հ**ռայր Թովմասյանի** ներկայացմամբ՝ սա դեռևս նախորդ տարվանից սկսված նախագահի մոտ ունեցած քննարկումների արդյունքն է: Որոշվեց երկարաժամկետ ծրագիր մշակել, երբ ակնհայտ դարձավ, որ էմիզոդիկ փոփոխությունները կարճաժամկետ արդյունք են տալիս, մինչդեռ երկրին անհրաժեշտ են արմատական դատաիրավական բարեփոխումներ:

Նախարարի ներկայացմամբ՝ նոր ծրագիրը տարբերվում է նախորդ բարեփոխումներից: Թովմասյանը այն համեմատում է մարդատար մեքենայի հետ, որը կոմպակտ է, հարմարավետ, շարժիչը լավ է աշխատում, միշտ բենզին ունի: «Սա մի ծրագիր է, որը չի սահմանափակվում միայն դատական իշխանությամբ: Փոփոխությունները լայն ընդգրկում ունեն: Նոր ծրագիրը ներառում է դատարանակազմության խնդիրներ», ասում է Թովմասյանը՝ հավելելով:

«Շատ է քննադատվել գործերի բաշխումը դատավորների միջև, չեմ ժխտում՝ եղել են կեղծիքներ նաև այն պատճառով, որ չկար գործերի բաշխման արդյունավետ համակարգ: Չեմ կարող ժխտել, որ երբեմն կամայականություններ են եղել: Առաջարկվելու է քննարկել դատարանների նախագահների որոշակի ժամկետով նշանակվելը եւ ռոտացիայով փոխվելը: Ծրագրի ավարտին ճշտելու ենք՝ որքանով է զարգացել հասարակության վստահությունը: Վեց ամիսը մեկ այս առումով հաշվետվություն է տրվելու: Մենք խնդիր ունենք նաեւ դատավորների պատրաստման առումով», ասաց նախարարը՝ ընդգծելով, որ շուտով կգործի արդարադատության ակադեմիան, որը որոշ չափով կլուծի վերհանված խնդիրը:

Թովմասյանի հավաստմամբ՝ նոր ծրագրով փոխվելու է Արդարադատության խորհրդի աշխատաձեւը, ներառված են հատուկ մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր կլինի խուսափել դատարաններում գործերի անհարկի ձգձգումներից: «Արմատաբար կփոխվի Քրեական օրենսգիրքը: Կներմուծվի հանրային աշխատանքների ինստիտուտը: Մի շարք հանցակազմեր, որոնք այսօր նախատեսված են քրեական օրենսգրքով, կապաքրեականացվեն:

Ենթադրենք՝ երիտասարդը 20.000 դրամ է գողացել: Նրան չեն դատի, այլ մեկամյա հանրային, սանիտարական աշխատանք կիրականացնի: Դուք կտեսնեք փողոցում մաքրություն կատարող, ծառեր տնկող, հանրային աշխատանք կատարող անձանց, ինչին զուգահեռ կտարվի բացատրական աշխատանք, որ գողությունը սխալ ճանապարհ է: Երկրորդ անգամ նման բան կատարելու համար կտուգանվի, իսկ երրորդ անգամ՝ կձերբակալվի»:

Թովմասյանի ներկայացմամբ՝ հասարակության զարգացման համար երկու գրավական կա՝ պետության անվտանգության եւ պաշտպանության ու արդարադատության համակարգերը: «Պետությունը կզարգանա, եթե տվյալ հասարակությունում հանրային կյանքը կազմավորված է արդարության սկզբունքի վրա, պետությունը կզարգանա, եթե արդարադատությունն իրականում արդար է, արդյունավետ եւ հաշվետու հասարակությանը»:

Ծրագրի նպատակն է նաեւ բարձրացնել պետական համակարգի արդյունավետությունը: Նախարարը համոզված է, որ ծրագրի արդյունքում խնայողաբար կօգտագործվի պետական ռեսուրսը:

Նախարարի ներկայացմամբ՝ էական փոփոխություններ են սպասվում նաեւ փաստաբանության համակարգում: Լուրջ փոփոխություններ են սպասվում նոտարական եւ զգոյի համակարգերում: Մեկ այլ բարեփոխմամբ պետական ռեգիստրները կհավաքվեն մեկ կառույցում», ասաց Թովմասյանը՝ հավաստիացնելով, որ ծրագիրն ունի հակակոռուպցիոն ուղղվածություն: Ծրագրի ավարտից հետո ծառայությունների 80-90-%-ը կմատուցվի մեկ օրվա ընթացքում, մեկ պատուհանի սկզբունքով, մեկ այցելության միջոցով, կամ դրանք կմատուցվեն առցանց եղանակով:

ՀԱՄՏԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. Գ.

Հռայր Թովմասյանը երեկ նաեւ հերքեց այն լուրը, թե ինքը նշանակվելու է Վճռաբեկ դատարանի նախագահ: Նա խորհուրդ տվեց նայել օրենսդրությունը՝ համոզվելու, որ ինքը չի համապատասխանում օրենսդրության պահանջներին: «Իհարկե, դուք կարող եք ասել, թե ինձ համար օրենսդրությունը կփոխեն, սակայն կրկնում եմ՝ մի հավատացեք այդ բամբասանքներին: Ըստ այդ լուրերի՝ ինձ սկզբում դեսպան նշանակեցին, հետո հանեցին, հիմա դատավոր են նշանակում: Հաստատվել է կառավարության հնգամյա ծրագիրը, եւ ես շարունակում եմ պաշտպանվարել որպես արդարադատության նախարար: Ասեմ ձեզ, որ դատավորի աշխատանքն ինձ համար հոգեհարազատ չէ»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԱԺ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԵՐԻՆ

Ընդդիմադիր եւ «այլընտրանք» քաղաքական ուժերին «մանրուքները» չեն հետաքրքրում

1-ին էջից

Զարմանալ կարելի էր այդ ամենի նկատմամբ նրա կեցվածքից: Վարչապետի հանդուրժողական վերաբերմունքն ու հորդորը՝ զերծ մնալ նման գործելաոճից, հերթական անգամ ապացուցեցին, որ ճշմարիտը նա չէ, ում ձայնն ամենից բարձր է եւ որ հայհոյանքը ընդամենը փաստի սով է:

Անընդունելի էր նաեւ, որ ՀՀԿ-ն ներկայացնող պատգամավորները առանձնապես տոգորված չէին պաշտպանելու իրենց կուսակցությունը ներկայացնող կառավարությանն ու վարչապետին: Մի տեսակ ալարելով, առանց ճիգ ու ջանքի, հերթապահ խոսքերով, այսպիսին էին նրանց ելույթները: Այդ կուսակցության մեջ ներգրավված տարասեռ զանգվածն այդպես էլ չհասկացավ, որ կառավարության գործունեության հաջողությամբ է պայմանավորված իրենց պատգամավոր ընտրվելու կամ վերընտրվելու հնարավորությունը, եվ ընդհակառակը, եթե կառավարությունը չհաջողվի՝ ոչ մի ընտրակաշառք չի օգնի նրանց: Նրանք չհասկացան, որ իրենց մեծ մասը հայտնվել է պատգամավորական աթոռներին, քանի որ կուսակցական ցուցակի առաջին եռյակի մեջ նաեւ Տիգրան Սարգսյանի անունն է եղել: ՀՀԿ-ն ընտրողներից գերակշիռ մասը ոչ ծանոթ է ցուցակի մյուս անդամներին, ոչ էլ նրանց է կարեւորել, շատերը առաջնորդվել են նրանով, որ կառավարությունը կշարունակի ղեկավարել միջազգային տնտեսական գործընթացներին լավատեղյակ եւ Հայաստանի տնտեսության ներկան ու ապագան պատկերացնող մարդ:

Ինչ վերաբերում է կառավարության ծրագրին ըստ էության, ապա նույն խորհրդարանական քննարկումների ժամանակ ոչ ոք չմատնանշեց այդ ծրագրի այն մասերը, որոնք իսկապես ստերեոտիպեր ջարդող են: Մենք արդեն անդրադարձել ենք դրանց: Օրինակ, տնտեսության իրական հատվածի՝ արդյունաբերությանը եւ գյուղատնտեսությանը տրվող առաջնահերթությունը: 90-ականներից ի վեր, երբ ՀՀՇ-ական իշխանությունները ջանասիրաբար ոչնչացրին մեր արդյունաբերությունը եւ, ըստ ՄԱԿ-ի եւ ՀԲ-ի տվյալների, շուրջ 600 հազար աշխատատեղ փակվեց, ոչ մի կառավարություն չէր հայտարարել արդյունաբերության զարգացման անհրաժեշտության մասին եւ այդ ճյուղին պետական աջակցություն նախատեսող հատուկ ծրագիր չէր ներկայացրել:

Ժողովրդագրական աղետի մասին հարայ-հրոց բարձրացնողները, որոնց իշխանության տարիներին Հայաստանը 700 հազարից 1 մլն մարդ լքեց, ոչինչ չեն ասում կառավարության ծրագրում ծնելիությունը խրախուսող քայլերի մասին: Չէ՞ որ դարձյալ անցած 20 տարիների ընթացքում ոչ մի կառավարություն գումարներ չէր հատկացնում այդ նպատակով: Ասենք, կարող էր, չէ՞, մեկնումեկն ըստ էության առաջարկ ներկայացնել: Ենթադրենք՝ առաջարկեր 3-րդ եւ 4-րդ երեխայի ծննդյան դեպքում, բացի միանվագ 430 հազար դրամի փոխարեն արդեն 1 մլն դրամ տալուց, նրանց ամսական նպաստ, 18 հազար դրամի փոխարեն 30 հազար դրամ սահմանել: Այսինքն, դրանով պետությունը, նորածին 3-րդ եւ 4-րդ երեխաների հոգսը, առնվազն մինչեւ նրանց 2 տարեկան դառնալը, կվերցներ իր վրա, ինչի դրական արդյունքները կզգացվեին ծնելիության ցուցանիշի վրա: Սակայն ոչ, նման «մանրուքներ» ընդդիմադիր եւ «այլընտրանք» քաղաքական ուժերին չեն հետաքրքրում: Նրանց անհրաժեշտ է ամեն գնով չեզոքացնել գործող վարչապետին, քանի որ նրա ներկայացրած նոր ծրագրում նախատեսվող քայլերը կարող են դրական փոփոխություններ առաջացնել երկրի տնտեսության մեջ եւ մարդկանց կյանքում, ինչի արդյունքում քաղաքական դաշտում նրանց վարկանիշը նվազելու է: Այդ պատճառով էլ նրանք գործի են դնում բոլոր հնարավորությունները՝ խորհրդարանական ամբիոնից ու փողոցային հանրահավաքներից մինչեւ ճղճղան քարոզչություն իրենց թերթերով եւ լրատվական կայքերով:

ՎիվաՍել-ՄՏՍ-ն կրթական լաբորատորիաներ է ստեղծել Գավառի պետական համալսարանում եւ Վարդենիսի մանկավարժական ինստիտուտում

ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, տեղեկացնում է, որ գիտելիքներ եւ հմտություններ յուրացնելու ժամանակակից տեխնոլոգիաները հասանելի են դարձել Գավառում եւ Վարդենիսում գործող երկու բուհում:

Շարունակական կրթության արդի պահանջները բուհական միջավայրում իրականություն դարձնելու ՎիվաՍել-ՄՏՍ-ի պատրաստակամությունը հերթական անգամ դրսեւորվում է ծրագրային աջակցության տեսքով: Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը կրթական բարեփոխումների պարտադիր պայման է համարում տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) տարածումը:

Ինտերնետ հասանելիությամբ ապահովված՝ 20 համակարգչով լսարան, լազերային տպիչ,

«Home-Zone Turbo» փաթեթի շրջանակներում գործող՝ 3G երթուղիչ, փոխանջատիչներ եւ Wi-Fi անկյուն. ուսումնական գործընթացների պահանջներից բխող տեխնիկական այսպիսի հագեցվածություն կունենա Գավառի պետական համալսարանը: Ավելի վաղ ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցել է համալսարանին՝ մասնաշենքերի միջեւ օպտիկամանրաթելային մալուխի միջոցով ինտերնետային հաղորդակցության ներքին ցանց ստեղծելու հարցում:

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը սարքավորումներ է տրամադրել նաեւ «Վիկտոր Համբարձումյանի» անվան Վարդենիսի մանկավարժական ինստիտուտին: Այստեղ, 5 համակարգչով ինտերնետ հասանելիությամբ լսարանից բացի, համացանցային կայ կգործի նաեւ գրադարանում: Տրամադրված արժեքավոր մյուս սարքավորումների ցանկում դարձյալ ընդգրկված են լազերային տպիչը, «Home-Zone Turbo» փաթեթի շրջանակներում գործող՝ 3G երթուղիչն ու փոխանջատիչները:

«Տեղեկատվական դարաշրջանում կրթության հանդեպ ընդգծված ուշադրությունը բխում է երկրի զարգացման հրամայականներից: Դա ենթադրում է աշխատանքային եւ սոցիալական առավել հարմար միջավայր, ինչպես նաեւ հուսալի եւ արդյունավետ ենթահամակարգերի առկայություն: ՎիվաՍել-ՄՏՍ-ը կարեւոր է համարում ուսումնառության արդյունավետության եւ որակի բարձրացումը: Այս ծրագիրը ՎիվաՍել-ՄՏՍ-ի՝ համալսարանների հետ համագործակցության կարեւոր ուղղություններից մեկն է», ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Հիշեցնենք, որ Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը նախատեսում է մինչեւ տարեվերջ համակարգչային լսարաններով ապահովել ընկերության հետ համագործակցող բարձրագույն ուսումնական 29 հաստատություն:

Տեխնիկական շափյուղաների աճեցման արտադրությունն արտոնություն ստացավ

«Աստրա Կրիստալս» ընկերության իրականացվող ներդրումային ծրագրով 2012-ի հունիսի 1-ից մինչեւ 2014-ի փետրվարի 1-ը ներառյալ ներմուծվող 300 մլն դրամը գերազանցող ապրանքների ԱԱՀ վճարման ժամկետը կառավարության երեկվա որոշմամբ հետաձգվեց մինչեւ 2015-ի հունիսի 1-ը: Ընկերությունը հիմնադրվել է 2011-ին եւ նախատեսում է կազմակերպել տեխնիկական բյուրեղի աճեցման եւ մշակման, ինչպես նաեւ տեխնիկական շափյուղաների մաքուր հումքի տեղական արտադրություն: Ռուսական եւ չինական նորագույն տեխնոլոգիայով ու սարքավորումով հագեցած նոր գործարանն ամսական կարտադրի մոտ 2 տոննա բյուրեղ եւ 3 տոննա մաքուր հումք: Վերջնական արտադրանքը միտված է լինելու դեպի լուսադիոդային շուկա, որն ապահովում է աշխարհում արտադրված տեխնիկական շափյուղայի սպառման զգալի մասը: Սարքավորումների ձեռքբերման համար ներդրվելու է շուրջ 4,2 մլրդ դրամ, ստեղծվելու է առնվազն 20 աշխատատեղ՝ մոտ 180 հազար դրամ միջին աշխատավարձով: Արտադրանքը նախատեսվում է իրացնել Չինաստանի, Ռուսաստանի եւ Եվրոմիության շուկաներում:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Սեվանից էլի լրացուցիչ ջուր ենք վերցնում՝ օրենսդրական փաթեթն առաջին ընթերցմամբ ընդունվեց

Երբ Ազգային ժողովում երեկ 93 կողմ եւ ընդամենը 12 դեմ ձայներով առաջին ընթերցմամբ ընդունվեց Սեվանից լրացուցիչ 150 մլն խորանարդ մետր ջրառ թույլատրող օրենսդրական փաթեթը, դրան դեմ ուժերից ՀՅԴ ներկայացուցիչ **Վահան Հովհաննիսյանը** վարման կարգի վերաբերյալ ձայն վերցնելով ասաց ՀՀԿ-ական Վարդան Այվազյանին. «Դուք չե՞ք կարող հանրաքվեականներով այնպես անել, որ Ենիսեյ գետը հոսի Հայաստանով»: Չգիտենք, թե ինչ պատասխանեց Վարդան Այվազյանը (ասում են՝ ասել է. «Դուք երբ որ Բոսֆորը սարքեք արյան ծով, մենք էլ Ենիսեյը Հայաստանով կհոսեցնենք), որովհետեւ նա տեղից ինչ-որ բան ասում էր, բայց ԱԺ նախագահը նրա խոսափողը միացնել թույլ չտվեց:

Սակայն փաթեթի առաջին ընթերցմամբ ընդունումից առաջ այնքան մտահոգություններ հայտնվեցին, որ անգամ զարմանալի թվաց, թե ինչու էին դեմ ձայները այդքան փիչ: Բայց ասենք, որ հումորը սկսվել էր ոչ թե Վահան Հովհաննիսյանից, այլ հենց ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ **Անդրանիկ Անդրեասյանից**, որը հարցերին պատասխանելիս ասաց, թե գործադիրը իր որոշումներով գետերի հոսքերը կառավարելու հնարավորություն չունի: Նախ Ա. Անդրեասյանը խոսեց բնության այուրոիզից, թե կանխատեսելի չի եղել, որ ջրամբարները դատարկ կմնան, քանի որ ձմռանն առատ ձյուն է եղել, բայց հիմա Ազատի ու Աղարանի ջրամբարները ջրի դեֆիցիտ ունեն, ու շուրջ 40 հազար հեկտար հողերը ոռոգելու համար կոշտ կանխատեսումներով այս տարի մինչեւ 150 մլն խմ Սեւանից լրացուցիչ ջրառ է հարկավոր, ընդհանուր՝ 320 միլիարդ խմ:

Ընդդիմախոսները հարցերով հակադրվեցին այս նախաձեռնությանը, կասկածներ հայտելով, որ այս լրացուցիչ ջրառը հենց գյուղատնտեսական նպատակների համար մտահոգությունից է:

ՀԱԿ-ից Նիկոլ Փաշինյանը այդ կասկածը դրեց իր ելույթում նաեւ, թե որքան ափամերձ տարածք է ազատվելու այդ ջրառից, եւ եթե երաշտ էր սպասվում, ուրեմն պետք է կառավարությունը միջոցներ ձեռնարկեր ու ջրամբարների ջուրը խնայողաբար օգտագործեր, իսկ այժմ լրացուցիչ ջրառի դեպքում Սեւանի բացասական հաշվեկշիռը չի բացառվում, ինչպես որ մայր օրենքով է նախատեսված:

Շատ ելույթներում առկա էր այս նախաձեռնությամբ օլիգարխների օբյեկտները ջրածածկ լինելուց հետ պահելու շարժառիթի վերաբերյալ կասկածը:

ԲՀԿ-ական **Սամվել Բալասանյանին** անպայման հավաստիացում էր պետք, որ ոչ թե հենց 150 միլիոն խմ պետք է վերցվի, այլ մինչեւ՝ 150 մլն խմ՝ հույսով, որ ավելի փիչ պետք կլինի, բայց ընդհանրապես՝ նա եւ իր կուսակցությունը կողմ էին գյուղացուն ոռոգման ջրով բավարարելուն:

Չնայած՝ պակաս ծախսելու հույսը մեր կարծիքով անիրական է, քանի որ հայտնի դարձավ, որ 100 մլն խմ այս տարի արդեն վերցրել են Սեւանից: Հրանտ Բագրատյանը հարցը տարավ-հասցրեց նրան, թե ինչու է գյուղացիներին ջուրը վաճառվում, իսկ Սեւան-Հրազդան կասկադին նվեր տրվում: Կասկածը զարգացավ՝ արդյո՞ք հենց նրա համար չէ այդ լրացուցիչ ջրառը, որ էլեկտրաէներգիայի արտադրությունն ու մեծ շահույթներն ապահովվեն՝ ջուրն անցնելու է նախ կասկադով ու էլեկտրաէներգիայի է վերածվելու:

Ուրիշներին տանջում էր այն հարցը, թե ինչո՞ւ են դատարկ Ազատի եւ Աղարանի ջրամբարներն այս ջրառաս տարում, ուր եւ ինչպես է անհետացել ջուրը՝ արդյոք չնորոգված ջրամբա՞ռն են են ջուրը թողել, թե՞ դիտմամբ է տեղի ունեցել (Վահագն Մախսուդյան), եւ կամ ինչու գյուղացիների պարտքը ջրի համար չվերցնել էներգահամակարգից: Անգամ ջուրը ընտրությունների ժամանակ որպես ընտրակաշառք ձրի նվիրելու տարբերակի մասին խոսք գնաց (**Վահան Հովհաննիսյան**), որի պատճառով էլ ջրամբարները դատարկ են: Վերջինս հիշել էր պատմական անցյալը՝ հնագետի իր գիտելիքներով նշելով, թե Սեւանը 3,5 հազար տարի առաջ այնքան ցածր մակարդակ է ունեցել, որ հետագայում շատ բնակավայրեր են մնացել ջրի տակ, իսկ 1000 տարի առաջ լիճը բարձրացել է, եւ բնությունն է այդ բոլորը կարգավորում: Բայց այժմ բաց թողնվող ջուրը պետք կգա այն ժամանակ, երբ Սեւանը սկսի հետ նահանջել, եթե հիմա անընդհատ չվերցնենք, հետո փիչ կնահանջի:

Արմեն Ռուստամյանը վերցրեց հումորի էստաֆետը ջրտնտկոմի նախագահ Ա. Անդրեասյանից, թե վատ բնակլիմայական պայմանները հետաքրքրում են կառավարությանը, ու նրա համար անհասկանալի էր, թե ինչու Սեւանը լցված է, Սիսիանի ջրամբարը եւս, իսկ Ազատի ու Աղարանների ջրամբարները դատարկ են, ու ո՞ւր է գնացել ջուրը:

Էներգահամակարգից վերցնելու մասին հարցը Ա. Անդրեասյանը տարավ էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դաշտ:

Լեւոն Զուրաբյանին հետաքրքրում էր Սեւանի ջրառի եւ հարակից գործընթացի հասարակական վերահսկողության հնարավորությունը ոլորտի խնդիրներով զբաղվող ՀԿ-ների կողմից, ու անգամ ՀՀԿ խմբակցությունից **Խոսրով Հարությունյանը** անհանգստացած էր Սեւանի բացասական հաշվեկշռի բացառման սկզբունքից հրաժարվելուց, քանի որ վստահ չէր, թե որոշման արդյունքում հենց այդպես չի լինի:

Էդմոն Մարուքյանը, Վիկտոր Դալլաքյանի ընտրատարածքից ընտրված պատգամավորը, դեմ էր փաթեթին, քանի որ համարում էր, թե այն չի համապատասխանում կառավարության որդեգրած ռազմավարության ուղղություններին:

«Ժառանգության» Ռուբեն Հակոբյանը փաթեթի մերժումը բնապահպանական նկատառումներով էր պայմանավորում:

Հրանտ Բագրատյանը ջուրը հավասարեցրեց նավթին՝ 150 մլն խմ նավթի մասին է խոսք գնում, դեռ մի բան էլ ջրին ավելի թանկ գին տվեց նավթից՝ աշխարհում է այդպես: Իսկ մենք մեր ունեցածին տիրություն անել չգիտենք. երբ նրա վրա գին դրվի, ապա ինքն իրեն կկարգավորվի ջրի խնայողական օգտագործումը, մինչդեռ այսօր որոշումը 7-8 անգամ հարկավորից ավելիով է կատարվում:

Սակայն բոլոր այս ընդդիմախոսություններին հակադրվեցին նախաձեռնության հեղինակ կառավարության ներկայացուցիչը, ՀՀԿ-ից **Վարդան Այվազյանը** (2002-ից Սեւանը 4 մ բարձրացել է, հիմա ինչո՞ւ գյուղացուն ջուր չտալ), **Հակոբ Հակոբյանը, Արտակ Դավթյանը, Դավիթ Հարությունյանը**, ՕԵԿ-ից **Խաչիկ Հարությունյանը**, որոնք խոսում էին գյուղացու կարիքները հոգալու անհրաժեշտության, բնության անկանխատեսելիության, վերջին տարիներին Սեւանի մակարդակի անասելի բարձրացման մասին, հույսով, որ փաթեթով պահանջվածից փիչ ջուր կծախսվի: Եվ շեշտում էին, որ բնապահպանական առումով Սեւանի հետ ոչինչ չի կատարվի, քանի որ Սեւանը շարունակում է բարձրանալ, չնայած Սեւանի հանդեպ համալիր վերաբերմունքի անհրաժեշտությունը եւս ընդունում էին:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գյումրու 75 խաղաքաղաքացիները

Սեպտեմբերի 9-ին Գյումրիում տեղի կունենան տեղական ինքնակառավարման ընտրություններ, Հայաստանի երկրորդ քաղաքի ավագանի կընտրի: Այս կապակցությամբ Գյումրիում 75 քաղաքացիներ՝ հասարակական, մշակութային գործիչներ, ընդունել են «Գյումրիում նոր ավագանու քաղաքացիական նախաձեռնության հռչակագիր»: Հռչակագրում մասնավորապես ասված է. «Ցավով արձանագրում ենք, որ արդեն ավելի քան 24 տարի քաղաքը չի կարողանում վերականգնել իր երբեմնի փառքն ու հեղինակությունը, քաղաքացիների 47 տոկոսն ապրում է աղքատության մեջ ու կեցության համար անհրաժեշտ պայմաններ չունի: Անցած 15 տարիներին մենք եւ քաղաքացիական հասարակության բազմաթիվ այլ ներկայացուցիչներ պետական ու տեղական իշխանությունների ուշադրությունը բեւեռեցինք Գյումրու խնդիրներին, ցավոք, ապարդյուն. քաղաքը կառավարվել է առանց հանրային մասնակցության, առանց նախաձեռնող ավագանու եւ առանց երկարաժամկետ ռազմավարության: Մենք բավականաչափ տեւական ժամանակ վերոհիշյալը վերլուծելուց հետո քաղաքի խնդիրների արմատական լուծման այլ եղանակ չգտանք, քան իշխանություն կամ իշխանության մաս կազմելու ճանապարհը: Այսպիսով հռչակում ենք Գյումրիում 2012-ի սեպտեմբերի 9-ին կայանալիք ընտրություններում ավագանու թեկնածուների թիմ առաջադրելու մեր քաղաքացիական նախաձեռնությունը»:

75 գյումրեցու ստորագրությամբ կնքված հռչակագրում ընդգծվում է նաեւ, որ իրենք «ընտրություններին մասնակցելու համար առաջադրել են երբեք իշխանությունում չներգրավված, կոռումպացված եւ հանցագործ կառավարումներում չվարկաբեկված, իրենց գործերում որոշակի նվաճումներ ունեցող ու քաղաքի զարգացման իրատեսական ծրագիր ունեցող թեկնածուներ»:

Տ. Ա.

Սիրիան, Հալեպը, հայերը...

Որ հայաբնակ Սիրիան կանգնած է քաղաքացիական պատերազմի վտանգի առջեւ, այսօր տեսանելի է բոլորին:

Սակայն, մանավանդ հաշվի առնելով արաբական աշխարհում անցյալ տարվանից սկսված գործընթացները, Սիրիայում եւս քաղաքացիական անհանգստությունները դիտարկելի չեն միայն երկրի ներսում ձեւավորված դժգոհություններով: Սիրիական լրատվամիջոցները ընդգծում են, որ երկրում ստեղծված իրավիճակը հրահրված է Արեւմուտքից, ինչպես եւ այլ արաբական երկրներում: Սիրիայում բնակչությունը միատարր չէ՝ ոչ էթնիկ, ոչ էլ կրոնական առումներով: Հետեւաբար այն հեղափոխական կամ հեսհեղափոխական սցենարները, որոնք կիրառվել են Եգիպտոսում, Լիբիայում, Թունիսում, Եմենում եւ այլուր, չեն կարող կիրառվել Սիրիայում, քանի որ յուրաքանչյուր երկիր իր առանձնահատկություններն ունի: Օրինակ, Լիբիայում գործեց առաջնորդին սպանելու գնով պաշտոնազրկելու սցենարը, այս տարբերակը, հաշվի առնելով սիրիական առանձնահատկությունները, Սիրիայում չի կարող անցնել: Եգիպտոսում նախագահ Մուբարաքը հրաժարական տվեց, որից հետո այդ երկրում անցկացվեցին նախագահական ընտրություններ: Այս, եթե կուզեք՝ «եգիպտական սցենարը» Սիրիայի պարագայում ամենաշրջանառվող առաջարկություններից է, որին կարծես թե իրենց համաձայնությունը տվել են նախագահներ Պուտինն ու Օբաման: Մյուս կողմից, Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան առաջարկում են «եմենյան տարբերակը». արաբական այս երկրում Արեւմուտքը խոստացավ Եմենի նախկին նախագահին ու նրա ընտանիքին անձեռնմխելիություն պաշտոնից հրաժարվելու դիմաց: Իսկ այս ընթացքում, մինչ Սիրիայում վերջնականապես չի գործադրվել որեւէ սցենար կամ չի գտնվել նորը՝ «սիրիականը», հասարակության դժգոհ հատվածին պետք է պահել որպես երկրում նախագահական պաշտոնանկությանը հասնելու կարեւորագույն պատճառ:

Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ արաբագետ Հայկ Քոչարյանը, ընդգծելով, որ Սիրիան կանգնած է քաղաքացիական պատերազմի առջեւ, նկատեց. «Իշխանությունը փորձում է ամեն կերպ դեմն առնել պառակտիչ գործողությունների, որոնք ղեկավարվում են այսպես կոչված ընդդիմության կողմից, ինչո՞ւ այսպես կոչված, որովհետեւ սիրիական ընդդիմությունը առանձին խմբավորումներն են, որտեղ, անշուշտ, առաջատար տեղ ունի Սիրիայի ազգային կոմիտեն»: Ստացվում է, ուրեմն, որ սիրիական դեմքերը դիտարկելի են նաեւ որպես «պառակտիչ», իսկ եթե այսպես դիտարկելի են, ուրեմն կարելի է ապացուցել նաեւ, որ այդ գործողությունները հրահրված են կոնկրետ կամ զանազան ուժային կենտրոններից:

Սիրիան ու այդ երկրում տեղի ունեցող իրադարձությունները հայերիս հետաքրքրական են հատկապես այն առումով, որ այդ երկրում մենք ունենք Մերձավոր Արեւելքի ամենամեծ հայկական համայնքներից մեկը: Արաբագետ **Քոչարյանն** ընդգծում է. «Հալեպը Մերձավոր Արեւելքի ամենամեծ հայկական համայնքն է, ու եթե սփյուռքը դիտարկելի է որպես հայկական ցանց, ապա մենք այս իրադարձություններից կարող ենք կորցնել այդ ցանցի կարեւոր մասնիկներից մեկը»: Միեւնույն ժամանակ, սիրիահայերը Սիրիայի քաղաքացի են, եւ այդ երկրում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ կարող են ունենալ ու արտահայտել իրենց դիրքորոշումը: Արաբագետ Քոչարյանը նկատում է, որ սիրիահայության շրջանում կան ե՛ւ նախագահ Ասադի կողմնակիցներ, ե՛ւ ընդդիմադիրներ. «Այսինքն համայնքը, ինչպես եւ ողջ Սիրիան, միատարր չէ, սա կարող է բերել ներհամայնքային լարվածության, ինչը խիստ վտանգավոր է», ասաց Քոչարյանը: Այս օրերին շատ քննարկվող՝ սիրիահայերի ներգաղթ կազմակերպելու առնչությամբ արաբագետը նկատում է. «Սիրիահայերը Սիրիան համարում են իրենց հայրենիքը, երկիրը: Նրանք այնտեղ ունեն մշակութային, տնտեսական լուրջ ներդրումներ, հետեւաբար պետք է ամեն ինչ անել, որ մենք չկորցնենք հայկական ցանցի այս կարեւոր մասնիկներից մեկը՝ սիրիահայ համայնքը»: «Ինչպե՞ս» հարցին Քոչարյանը պատասխանում է. «Եթե այս ուղղությամբ ՀՀ-ն որեւէ բան է անում, ապա դա այնքան էլ լավ չի անում: Սիրիահայերն այսօր չեն զգում, որ իրենց թիկունքում պետություն կա՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության: Այնինչ ՀՀ-ն, պետական թե ոչ պետական խողովակների միջոցով պետք է սիրիահայությանը փոխանցի այս ազդակը», ասաց Քոչարյանը:

Ավելին, հայկական ողջ ցանցը թերեւս պետք է այսօր կանգնի իր կարեւոր մասնիկներից մեկի՝ սիրիահայության կողքին, հակառակ պարագայում ցանց չի լինում:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Արտաքին ճակատում

Հակառակ ներքին տարաձայնություններին եւ լրագրողների հանդեպ կոպիտ վերաբերմունքին (ծեծ, բանտարկություն եւ այլն), քաղաքական ասպարեզում Ադրբեջանի ներգործուն դերը Կովկասում գնալով բարձրանում է, որովհետեւ գերտերություններին այնքան էլ չեն հետաքրքրում այդ «մանր խնդիրները»՝ մինչ դրանք չդառնան անհրաժեշտ լծակներ խառնվելու համար վարչակարգ տապալելու թիրախ դարձած որեւէ կոնկրետ երկրի ներքին գործերին:

Ազերիները հաղթում են տեղեկատվության պատերազմում

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Ադրբեջանը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ է, ընտրված է հերթագայության սկզբունքով, նախագահում է այդ խորհրդի նիստերը: Եթե միջազգային քաղաքականության բարոյական սնանկության օրինակ է պետք, ապա բավական է նայել, թե ինչպես է ռազմատենչ նախագահ Իլհամ Ալիեւը ՄԱԿ-ի ամբիոնից ելույթ ունենալով խստիվ քննադատում հայերին որպես ագրեսորների եւ ազերի տարածքների զավթողների:

Երկու գլխավոր գործոններ նպաստեցին, որ Ադրբեջանը, Սլովենիային պարտության մատնելով, զբաղեցնի Անվտանգության խորհրդի այդ պաշտոնը: Առաջին՝ շրջանառվում է, որ 100-140 միլիոն դոլար է «նվիրաբերվել» զարգացող երկրներին, գնելու համար նրանց ձայները: Մյուս կողմից՝ Իսլամական կոնֆերանսում սովորական է դարձել մշտապես խաղարկել կրոնական «քարտը», այն է՝ մասնակից երկրներին համոզել, որ քրիստոնյա հայերը Ղարաբաղում կոտորել են իրենց մահմեդական եղբայրներին: Այդ իսլամական երկրներից առավել հնչեղ է Պակիստանի ձայնը: Այդպես եղել է այդ երկրի բոլոր (Բենազիր Բհուտոյի, Փերվեզ Մուշարաֆի եւ ներկայի) վարչակարգերի ornf: Նրանք բնական կողմնակիցներն են իրենց ազերի մահմեդական եղբայրների, անկախ այն հանգամանքից, որ Ղարաբաղի հարցը բոլորովին էլ կրոնական հակամարտություն չէ:

Այս առումով իսլամական երկրները որեւէ կաշառքի կարիք չունեն՝ պաշտպանելու Ադրբեջանի թեկնածությունը: Երկրորդ՝ Ադրբեջանի նորահայաց բարեկամությունը Իսրայելի հետ նույնպես նպաստել է, որ իր շուրջը համախմբվեն բազմաթիվ արեւմտյան երկրներ: Ազերիները պարտավորվել են հրձիգի դերը կատարել տարածաշրջանում՝ իրենց տարածքը տրամադրելով Իսրայելին, որպեսզի վերջինս որպես հարձակման հարթակ օգտագործի այն Իրանի դեմ հնարավոր հակամարտության պարագայում:

Հետաքրքրականն այն է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մակարդակով ոչ մի պարտադրող որոշում Ղարաբաղի հարցի վերաբերյալ չի կարող ընդունվել, որովհետեւ ԵԱՀԿ-ի համանախագահները նույնպես այդ կառույցի անդամներ են եւ չեն պատասխանատվում իրենց միջնորդական դերը զիջել ՄԱԿ-ին: Սակայն, անշուշտ, Ադրբեջանն ու Թուրքիան հասարակական հարաբերությունների ասպարեզում առավել լայն արձագանք գտնելու հնարավորություն են ստանալու ամեն անգամ, որ Ղարաբաղի հարցը շոշափվի ՄԱԿ-ի ամբիոնից: Սա, ինչ խոսք, մեծ մարտահրավեր է՝ ուղղված Հայաստանի արտգործնախարարությանը: Բարեբախտաբար, Հայաստանն ունի փորձված դիվանագետներ, հանձինս արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի եւ ՄԱԿ-ում Հայաստանի դեսպան Կարեն Նազարյանի:

Հայաստանը չի կարող ապավինել աշխարհի գերհզոր տերությունների ֆակուլտետում շարունակված գիտաժողովում ելույթներ ունեցան Շվեդիան, Գերմանիան, Չինաստանը, Լեհաստանն ու Չեխիան ներկայացնող հետազոտողներ, որոնք անդրադարձան հրեական Հոլոքոստին ու չինական Նանկինի կոտորածներին, ցեղասպանության խնդրին եւ տարբեր ժողովուրդների ինքնապաշտպանական մարտերին: Ցուցադրվեցին վավերագրական ֆիլմեր:

Իսկ ինչ վերաբերում է Մուսա լեռան ինքնապաշտպանությանը, ապա այս խնդրի լավագույն լուսաբանումը տվեց Նորթհիջի Կալիֆոռնիայի նահանգային համալսարանի հայկական ուսմանց ծրագրի վարիչ-դասախոս դոկտոր **Վահրամ Շեմմասյանը**, որը Մուսա լեռան ինքնապաշտպանության լավագույն հետազոտողն է: Նա 36 տարի ուսումնասիրել է Մուսա լեռան պատմությունը եւ այժմ միաժամանակ աշխատում է այդ թեմային նվիրված երկու գրքի վրա:

Իր ելույթում դոկտոր Շեմմասյանն անդրադարձավ Օսմանյան կայսրությունում 19-20-րդ դարերում հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերին, միաժամանակ հերքելով թուրքական այն թեզը, թե դրանք հայերի մի ընդհանուր ծրագրի մաս էին կազմում: «Մուսա լեռցիք կռվեցին խիզախությամբ, եւ նրանց հերոսությունը շարժապատկերին արժանի նյութ է», ասաց նա: Եթե Ֆրանց Վերֆելը չլիներ, միգուցե այդ հերոսամարտն էլ մնար մյուսների շարքում, սակայն նրա վեպը միջազգայնացրեց եւ անմահացրեց Մուսա լեռան հերոսամարտը: Հայ գիտնականի ասելով այդ վեպը մեծ նշանակություն ուներ նաեւ հրեաների համար, ովքեր կարդում էին Վերֆելի գործը թե՛ երեսունական թվականներին, թե՛ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ ողջակիզման ժամանակ եւ թե՛ Պաղեստինում, ուր հրեաները վտանգ էին տեսնում: Նույնիսկ նրանց դիմադրության ծրագիրներից մեկը կոչվում էր «Մուսա լեռ»: Մուսա լեռը բարեհաջող ելք ուներ, հետեւաբար նաեւ այդ հույսը ներշնչող պատմությունը Սուրբ գրքի դեր ունեցավ համակենտրոնացման ճամբարներում փակված հրեաների համար, ովքեր գաղտնի էին կարդում այս գիրքը:

1933-ին գերմաներեն լույս տեսնելուն պես, 1934-ին Վերֆելի անմահ ստեղծագործությունը անմիջապես թարգմանվել է անգլերեն եւ եբրայերեն: Իսկ 1935-ին, միայն երկու տարի անց, հայերեն երկու հատորով տպագրվել է Բուլղարիայում:

Պատասխանելով մեր հարցին, թե որքանով է իրականությանը համապատասխանում Վերֆելի գիրքը, պարոն Շեմմասյանն ասաց, որ վեպն իբրեւ պատմական աղբյուր չենք կարող օգտագործել: Իսկ իր ուսումնասիրությունները հիմնված են միայն բազմաթիվ երկրների արխիվներում կատարած հետազոտությունների վրա:

Ինչ վերաբերում է այսօրվա թուրքական հասարակությանը, ապա թեեւ այսօր ավելի շատ են Հայոց ցեղասպանության մասին խոսում, սակայն Թուրքիայի պետությունը շարունակում է ուրանալ այն, ինչը, կարելի է ասել, ցեղասպանության վերջին փուլն է:

Մոտ մեկ ժամ տեւած ելույթի ավարտին պարոն Շեմմասյանը ներկայացրեց Մուսա լեռան ինքնապաշտպանությանը առնչվող պատմական լուսանկարներ, պատասխանեց ներկաների հարցերին, իսկ նրա ելույթից առաջ ցուցադրվեց Էնդրյու Գոլդբերգի «Հայկական ցեղասպանություն» ֆիլմը:

Կազմակերպիչները նախատեսել են, որ գիտաժողովի բոլոր նյութերը կտպագրեն առանձին գրքով, իսկ չեխական հեռուստատեսության եւ ռադիոյի համար կնախապատրաստվեն առանձին հաղորդումներ:

Պետրոյթ, ԱՄՆ
Թարգմ. Հ. Ծ.

«Մուսա լեռներ». Ցեղասպանությունների ուսումնասիրման առաջին միջազգային գիտաժողովը Պրահայում

1-ին էջից

Ինչպես մեզ հետ զրույցում նշեց փառատոնի տնօրեն **Պավել Խալուպան**, ամեն տարի փառատոնի շրջանակներում անդրադարձել են որեւէ երկրի հրեական համայնքին, իսկ այս տարվանը նվիրված է Իսպանիայի հրեաներին: Բայց քանի որ տարիներ շարունակ իրենց մտահոգում է ցեղասպանության մասին չեխական հասարակության մեջ տարածված սակավ լրատվությունը, իր գործընկեր՝ Չարիքի հնէաբանության ուսումնասիրման կենտրոնի տնօրեն **Շիմոն Կրբեցի** հետ, որոշել են կազմակերպել ցեղասպանությունների հետազոտմանը նվիրված մի ուսումնական ծրագիր, որի առաջին փուլերից մեկը «Մուսա լեռներ» գիտաժողովն է: Գիտաժողովի բնաբանն ընտրվել է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» հայտնի վեպի ազդեցությամբ, նկատի ունենալով նաեւ, որ Վերֆելը ծնվել է Պրահայում, ապրել է Ավստրիայում, սակայն նրա վեպը աշխարհով մեկ ճանաչելի է դարձել Հայոց ցեղասպանության պատմությունը եւ հայ ժողովրդի հերոսական ինքնապաշտպանությունը:

Գիտաժողովի բացումը տեղի ունեցավ Պրահայի Վիոլլա թատրոնում, ուր օրվա հանդիսավա, հայտնի հեռուստամեկնաբան **Պավել Զունան** շեշտեց, թե իր հրեա տատիկն էլ է հրաշքով փրկվել ֆաշիստներից եւ հայտնվել Լոնդոնում: Այնուհետեւ ելույթի համար ձայնը տրվեց օրվա միակ բանախոսին՝ Չեխիայում Հայաստանի Հանրապետության դեսպան **Տիգրան Սեյրանյանին**, որն անդրադարձավ Ֆրանց Վերֆելի ստեղծագործությանը, նշելով, որ Չեխիայի հայ համայնքն ամեն տարի ապրիլի 24-ին հարգում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը՝ հարգանքի տուրք մատուցելով նաեւ Վերֆելին, ծաղիկներ դնելով Պրահայում նրա ծնված եւ ապրած տների հուշատախտակների մոտ:

Հայաստանի դեսպանը նշեց, որ 97 տարի անց էլ Թուրքիայի կառավարությունը շարունակում է ուրանալ հայերի ցեղասպանությունը: «Ցեղասպանության ուրացումը Հայկական ցեղասպանության ուղիղ շարունակությունն է», ասաց նա:

Այնուհետեւ ներկաների համար ելույթ ունեցավ չեխ հայտնի գրող **Պավել Զայիչեկը**՝անդրգրանդյան DG 307 խմբի հետ, ներկայացնելով խոհափիլիսոփայական գրական-երաժշտական նոր կոմպոզիցիան:

Հաջորդ օրը Պրահայի Կարլի համալսարանի ասվածաբանության ֆակուլտետում շարունակված գիտաժողովում ելույթներ ունեցան Շվեդիան, Գերմանիան, Չինաստանը, Լեհաստանն ու Չեխիան ներկայացնող հետազոտողներ, որոնք անդրադարձան հրեական Հոլոքոստին ու չինական Նանկինի կոտորածներին, ցեղասպանության խնդրին եւ տարբեր ժողովուրդների ինքնապաշտպանական մարտերին: Ցուցադրվեցին վավերագրական ֆիլմեր:

Իսկ ինչ վերաբերում է Մուսա լեռան ինքնապաշտպանությանը, ապա այս խնդրի լավագույն լուսաբանումը տվեց Նորթհիջի Կալիֆոռնիայի նահանգային համալսարանի հայկական ուսմանց ծրագրի վարիչ-դասախոս դոկտոր **Վահրամ Շեմմասյանը**, որը Մուսա լեռան ինքնապաշտպանության լավագույն հետազոտողն է: Նա 36 տարի ուսումնասիրել է Մուսա լեռան պատմությունը եւ այժմ միաժամանակ աշխատում է այդ թեմային նվիրված երկու գրքի վրա:

Իր ելույթում դոկտոր Շեմմասյանն անդրադարձավ Օսմանյան կայսրությունում 19-20-րդ դարերում հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերին, միաժամանակ հերքելով թուրքական այն թեզը, թե դրանք հայերի մի ընդհանուր ծրագրի մաս էին կազմում: «Մուսա լեռցիք կռվեցին խիզախությամբ, եւ նրանց հերոսությունը շարժապատկերին արժանի նյութ է», ասաց նա: Եթե Ֆրանց Վերֆելը չլիներ, միգուցե այդ հերոսամարտն էլ մնար մյուսների շարքում, սակայն նրա վեպը միջազգայնացրեց եւ անմահացրեց Մուսա լեռան հերոսամարտը: Հայ գիտնականի ասելով այդ վեպը մեծ նշանակություն ուներ նաեւ հրեաների համար, ովքեր կարդում էին Վերֆելի գործը թե՛ երեսունական թվականներին, թե՛ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ ողջակիզման ժամանակ եւ թե՛ Պաղեստինում, ուր հրեաները վտանգ էին տեսնում: Նույնիսկ նրանց դիմադրության ծրագիրներից մեկը կոչվում էր «Մուսա լեռ»: Մուսա լեռը բարեհաջող ելք ուներ, հետեւաբար նաեւ այդ հույսը ներշնչող պատմությունը Սուրբ գրքի դեր ունեցավ համակենտրոնացման ճամբարներում փակված հրեաների համար, ովքեր գաղտնի էին կարդում այս գիրքը:

1933-ին գերմաներեն լույս տեսնելուն պես, 1934-ին Վերֆելի անմահ ստեղծագործությունը անմիջապես թարգմանվել է անգլերեն եւ եբրայերեն: Իսկ 1935-ին, միայն երկու տարի անց, հայերեն երկու հատորով տպագրվել է Բուլղարիայում:

Պատասխանելով մեր հարցին, թե որքանով է իրականությանը համապատասխանում Վերֆելի գիրքը, պարոն Շեմմասյանն ասաց, որ վեպն իբրեւ պատմական աղբյուր չենք կարող օգտագործել: Իսկ իր ուսումնասիրությունները հիմնված են միայն բազմաթիվ երկրների արխիվներում կատարած հետազոտությունների վրա:

Ինչ վերաբերում է այսօրվա թուրքական հասարակությանը, ապա թեեւ այսօր ավելի շատ են Հայոց ցեղասպանության մասին խոսում, սակայն Թուրքիայի պետությունը շարունակում է ուրանալ այն, ինչը, կարելի է ասել, ցեղասպանության վերջին փուլն է:

Մոտ մեկ ժամ տեւած ելույթի ավարտին պարոն Շեմմասյանը ներկայացրեց Մուսա լեռան ինքնապաշտպանությանը առնչվող պատմական լուսանկարներ, պատասխանեց ներկաների հարցերին, իսկ նրա ելույթից առաջ ցուցադրվեց Էնդրյու Գոլդբերգի «Հայկական ցեղասպանություն» ֆիլմը:

Կազմակերպիչները նախատեսել են, որ գիտաժողովի բոլոր նյութերը կտպագրեն առանձին գրքով, իսկ չեխական հեռուստատեսության եւ ռադիոյի համար կնախապատրաստվեն առանձին հաղորդումներ:

«Փոխանակ Թուրքիայից փոխհատուցում պահանջելու, հայերը թող դիմեն Անգլիային եւ նրա դաշնակիցներին»

Հայտարարում է Թուրքական պատմական ընկերության աշխատակից պրոֆ. Չիչեքը

Երեկ «Բուգյուն» թերթը անդրադարձել էր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղահանված հայերի «տիրազուրկ կալվածքների» վաճառքից գոյացած 5 միլիոն օսմանյան ոսկու ճակատագրին: 1915-ին 22 մլն դոլարի հավասարազոր այդ գումարը, որի ներկայիս արժեքը, ըստ թուրքական թերթի, կազմում է 1 մլրդ 300 մլն ստեռլինգ, իթթիհատականները փոխանցել են Բեռլինի «Ռայխսբանկ» այն էլ՝ Ջեմալի, Էնվերի եւ Թալեաթի կեղծ անուններով բացված հաշվեհամարին, սակայն այդ գումարը որպես ռազմատուգանք յուրացրել են Անտանտի երկրները:

Ի դեպ, հայ ժողովրդի երեւելի բոլոր դահիճները, որոնք 1918-ի Մուդրոսի պայմանագրի ստորագրումից հետո փախել էին արտասահման, կեղծանուններ էին օգտագործում: Նրանցից Էնվերը, Թալեաթը եւ Ջեմալն ունեին մի քանի կեղծանուն: Ավելին՝ խուսափելու համար հայ վրիժառուների հաշվեհարդարից, Թալեաթը նույնիսկ բեղերն էր սափրել, դեմքը շպրտելով ֆեսը:

Համենայն դեպս, ինչպես «Բուգյունն» է վկայում, Անտանտի երկրների հայկական ոսկիները յուրացնելու փաստը, «տիրազուրկ կալվածքներին» առնչվող վավերագրերը երկու տարի ուսումնասիրելուց հետո, բացահայտել է Թուրքական պատմական ընկերության հայկական ուսումնասիրությունների բաժնի աշխատակից պրոֆ. Քեմալ Չիչեքը:

Օգտվելով առիթից, նշենք, որ պրոֆ. Չիչեքը Հայկական հարցի վերաբերյալ բազմաթիվ «աշխատությունների» հեղինակն է, որոնցից թերեւս կարելի է նշել նրա 2004-ին հրատարակված «Հայեր. ախտոր եւ արտագաղթ» եւ 2005-ին լույս տեսած «Հայերի բռնի արտագաղթը 1915-1917 թթ.» գրքերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքական պատմական ընկերությունը վերջին տասնամյակներում լծված է «ցեղասպանության հայկական պնդումների դեմ» պայքարելու, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականությունը հիմնավորելու գործին, կարծում ենք, ինքնին հասկանալի են դառնում պրոֆ. Չիչեքի շատ գիտական այսպես կոչված աշխատությունների ե՛ւ բնույթը, ե՛ւ բովանդակությունը, ե՛ւ առաջադրանքը:

Նույնը պետք է ասել հայերի ոսկիների յուրացման փաստի մասին նրա արած բացահայտումների առնչությամբ: Նա փաստը «Բուգյունին» պարզաբանելիս ահա թե ինչ է ասում. «Հայերին վերագրվող 5 միլիոն օսմանյան ոսկին իբրեւ ռազմատուգանք յուրացնելիս Անգլիան եւ նրա դաշնակիցները որեւէ փաստաթուղթ չեն թողել ճշտելու, թե այդ գումարը որտեղ է ծախսվել: Որքան ինձ հայտնի է, սփյուռքահայերը տեղյակ էին այս 5 միլիոնի մասին, որովհետեւ Կանադայում բնակվող մի խումբ հայ երիտասարդներ, օգտվելով Բրիտանիայի քաղաքացիություն ունենալու հանգամանքից, կարողացել են Անգլիայից 5 հազար ստեռլինգ գանձել: Քանի որ վճարել է, ուստի Անգլիան ընդունած պետք է լինի յուրացված գումարի՝ հայերին պատկանելու փաստը: Այլապես հայերին ինչո՞ւ գումար վճարել: Ավելին, անգլիացի փոխգնդապետ Կորբինը, որը եղել է «Հայերի բարեկամների» միության քարտուղարը, վկայակոչելով հայերին, պնդել է, որ 1930-ին արդեն այդ գումարից 200 հազար ոսկի էր մնացել: Ցեմ հասկանում, թե հայկական սփյուռքը փոխանակ Թուրքիայից փոխհատուցում պահանջելու, ինչո՞ւ առգրավված գումարը չի պահանջում Անգլիայից եւ նրա դաշնակիցներից: Փոխհատուցման բուն հասցեատերը Անտանտի երկրներն են եւ հատկապես՝ Անգլիան»:

Թուրքական պատմական ընկերության հայկական ուսումնասիրությունների բաժնի աշխատակից պրոֆ Չիչեքի այս խոսքերը ավելորդ են դարձնում ամեն մի մեկնաբանություն: Բայց որ ժողովրդական «Գող՝ սիրտը դող» ասացվածքը միանգամայն արտացոլում է նրա հոգեվիճակը, ակնհայտ է:

Խնդիրը, սակայն, Չիչեքի հոգեվիճակը չէ, այլ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ծավալումը եւ ծավալման պայմաններում թուրքական ժխտողականության դիրքերի սպառումը: Այս երկու փաստերը, այսինքն՝ գործընթացի ծավալումն ու դիրքերի սպառումը եթե համադրելու լինենք, ապա դժվար չի լինի կռահել, որ Հայոց ցեղասպանության ճանաչման փուլը միջազգային ասպարեզում թեւակոխում է Մեծ եղեռնի հետեւանքների վերացման փուլ եւ դա ընդունում է թուրք պրոֆեսորը:

Այլապես նա չէր փորձի փոխել ցեղասպանության համար փոխհատուցման հարկադրանքի տակ գտնվողների հասցեն:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Սիրիան պահանջում է իրեն հանձնել դասալիք գնդապետին եւ «Միգ-21»-ը

Սիրիայի պաշտպանության նախարարությունը տարածել է հայտարարություն հունիսի 21-ին առեւանգված «Միգ-21» ռազմօդանավի եւ դրա օդաչուի վերաբերյալ. հաղորդում է SANA գործակալությունը («**Ազգը**» երեկ անդրադարձել էր այդ միջադեպին):

Սիրիական հրամանատարությունը «Միգ-21»-ի օդաչուին՝ գնդապետ Հասան Համադային անվանել է «դասալիք, որը հանցանք է գործել եւ իր արարքների համար կպատժվի պատերազմական ժամանակի օրենքներով»:

Բացի դրանից, պաշտպանության նախարարությունը արդեն կազմվել է Հորդանանի իշխանությունների հետ եւ պահանջել է վերադարձնել «Միգ-21»-ը, որով Համադան թռել էր Հորդանան:

Առայժմ հայտնի չէ, թե գնդապետը ինչպես է արձագանքել իրեն տրված «դավաճան եւ դասալիք» որակումներին, քանի որ Հորդանանի կառավարությունը սահմանափակել է նրա շփումները մամուլի հետ: Պաշտոնական Ամմանը միայն հայտարարել է, որ քաղաքական ապաստանի տրամադրման

վերաբերյալ սիրիացի սպայի խնդրանքը բավարարված է: Արաբական լրատվամիջոցները հաղորդում են, որ ապաստան է տրամադրվել ռազմօդանավի նաեւ երկրորդ օդաչուին:

Սիրիայի իշխանությունները «Միգ-21»-ի հետ կապի խզման մասին հայտարարել էին հունիսի 21-ի առավոտյան: Որոշ ժամանակ անց պարզվել էր, որ օդանավը փորր բարձրության վրա հասել է երկու երկրների սահմանը եւ վայրէջք կատարել հարեւան Հորդանանում:

Հայրենակիցների դեմ գործողություններ չձեռնարկելու նպատակով սիրիացի բարձրաստիճան սպաներից ոմանք վերջերս դառնում են դասալիքներ: Բայց մինչեւ օրս ռազմօդանավի առեւանգման դեպք չէր արձանագրվել:

Ադրբեջանում՝ թալիշական մահվան օրակ

2008 թ. «Իրանի օգտին լրտեսության» մեջ մեղադրվեց եւ 10 տարվա ազատազրկման դատապարտվեց «Թալըշի սոդո» («Թալիշստանի ձայն») թերթի գլխավոր խմբագիր, լեզվաբան պրոֆեսոր Նովրուզալի Մամեդովը: Կարճ ժամանակ անց նա բանտային հիվանդանոցում կնքեց մահկանացուն: Պաշտոնական վարկածով՝ ուրտի անբավարարությունից, իրականում՝ դաժան կտանջներից:

Երեկ Բաքվում ձերբակալվել է նույն թերթի գլխավոր խմբագիր Հիլալ Մամեդովը: Վերջինս տնից դուրս է եկել, որպեսզի նավթագործների հիվանդանոցում տեսակցի հիվանդ բարեկամին, բայց այլեւս չի վերադարձել: Օրվա ընթացքում նրա բջջային հեռախոսազանգերին պատասխանել է անծանոթ տղամարդ, որը Մամեդովի հարազատներին ասել է, թե նա «չի կարող պատասխանել, որովհետեւ հետազոտվում է բժիշկների մոտ»: Միայն օրվա ավարտին է հայտնի դարձել, որ թալիշական թերթի գլխավոր խմբագիրը ձերբակալված է:

Հարազատները այդ մասին իմացել են, երբ ոստիկանությունը Մամեդովի բնակարանում խուզարկություն է անցկացրել եւ «հայտնաբերել 30 գր. հերոին»: Այդ առթիվ հանդես է եկել իրավապաշտպան Լեյլա Յունուսը: «Ես պնդում եմ, որ այդ ձերբակալությունը ազգային փոքրամասնությունների կոնկրետ ճնշում է»,- ասել է նա: Ըստ Յունուսի, Հիլալ Մամեդովին ձերբակալել են You Tube-ում նրա տեղադրած տեսահոլովակի պատճառով:

Դա թալիշական ազգային երգ է, որն ուղեկցվել է այսպիսի բացատրությամբ. «Իլհամ Ալիեւը «Եվրոտեսիլ 2012»-ի վրա միլիոններ է ծախսել, բայց այս թալիշական «Մեյխանա»-ն աշխարհում ավելի շատ համակիրներ ունի»: Լեյլա Յունուսի կարծիքով՝ Հիլալ Մամեդովը «թալիշ երիտասարդության շրջապատում մեծ հեղինակություն ունի, իսկ նմաններին իշխանությունը չի հանդուրժում»:

Թալիշ մտավորականի ձերբակալության կապակցությամբ մեկնաբանություններ է արել նաեւ փաստաբան Անար Գասիմլին: Վերջինս տեղեկացրել է, որ ներկայացել է ոստիկանության Բաքու քաղաքի Նիզամիի շրջանի 37-րդ տեղամաս, սակայն իրեն «ոչ միայն թույլ չեն տվել տեսակցել պաշտպանյալի հետ, այլեւ հրաժարվել են ծանոթացնել գործի նյութերին»: Այս առթիվ contact.az-ը գրում է, որ առաջադրված մեղադրանքը դատարանում ապացուցվելու դեպքում Մամեդովին սպառնում է 3-12 տարվա իրական ազատազրկում: Մեղադրանքն «ապացուցելու» հարցում ադրբեջանական իրավապահների «պրոֆեսիոնալիզմին» կասկածելու հիմքեր չկան: Խնդիրն այն է՝ կկրի՞ Հիլալ Մամեդովը Նովրուզալի Մամեդովի դառը ճակատագիրը, թե՞ ոչ:

Սակայն նույնիսկ նրա համար բարեհաջող ելքի, այն է՝ բանտում չսպանվելու, դեպքում էլ ակնհայտ է, որ Ադրբեջանում թալիշ մտավորականների համար մահվան օրակը պատվիրված է իշխանություններից:

Վ. Ա.

Կիպրոսը եւ Իսրայելը համատեղ կմշակեն գազի հանքավայրերը

Կիպրոսի առեւտրի նախարար Նեոկլիս Սիլիկիոտիսը հանրապետության խորհրդարանի պատգամավորներին հայտնել է, որ մտադիր է կազմակերպել գազի ներմուծումը Իսրայելի բացառիկ տնտեսական ջրերի հանքավայրերից:

Ըստ Սիլիկիոտիսի, խոսքը կղզիպետության տնտեսական խնդիրների միջակա լուծման մասին է, քանի որ Կիպրոսի ջրերում հայտնաբերված «Բլոկ-12» հանքավայրի մշակումը նախատեսվում է 2017-ից ոչ շուտ: Այդ մասին հաղորդում է Famagusta Gazettee թերթը:

Սիլիկիոտիսը Իսրայելին նաեւ առաջարկել է համատեղ մշակել երկու երկրների բացառիկ տնտեսական գոտիներում գտնվող գազի հանքավայրերը: Խորհրդարանում նախարարը ընդգծել է, որ Իսրայելը բարեհաճորեն է վերաբերվում այդ նախաձեռնությանը: Դրան առնչվող բանակցություններ սկսվելու են առաջիկա օգոստոսին:

Ամերիկացի նախարարը հրաժարական է տվել

ԱՄՆ առեւտրի նախարար Ջոն Բրայսոնը հրաժարականի դիմում է տվել, հայտարարել են Սպիտակ տան ներկայացուցիչները:

«Ես հանգեցի այն հետեւությանը, որ պետք է հրաժարական տամ, որպեսզի աղագայում խուսափեմ իմ հեռացումից», գրել է Բրայսոնը նախարարության աշխատակիցներին հասցեագրած նամակում:

Ինտերֆաքս-Ուկրաինա գործակալությունը հաղորդում է, որ հունիսի 11-ին երկու ավտովթարի պատճառ դառնալուց հետո Բրայսոնը ինքնակամ հիվանդանոց էր գնացել, որտեղ իբր բուժվում էր մինչեւ հրաժարականի դիմում գրելը: Որոշ տեղեկությունների համաձայն, ավտովթարների օրը Բրայսոնը եղել է անսթափ վիճակում:

Ոստիկանության տվյալներով, 68-ամյա նախարարը իր Lexus ավտոմեքենայով Սենթ Գեյբրիել քաղաքում (Լոս Անջելեսի մոտ) երթեւեկելիս բախվել է երկաթուղային անցատեղում կանգնած Buik մեքենային: Դրա երեք տղամարդ ուղեւորների հետ հարաբերությունների կարճատեւ պարզումից հետո նախարարը մեկնել է դեպքի վայրից, կրկին բախվելով նույն մեքենային:

Նախագահ Բարաք Օբաման երեկ ընդունել է Բրայսոնի հրաժարականը:

Մի քանի տպավորություն Զավեն Խսրոյանի աշխատանքների երեւանյան ցուցադրությունից

Կարծել, թե արվեստագետին ճանաչել կարելի է մեկ ցուցահանդեսով՝ այն էլ մի քանի ստեղծագործությունների, այդքան էլ լուրջ չէ: Միաժամանակ զուցել ու լսելը նրան պարտադիր է եւ եթե անգամ ելույթ է, եւ եթե անգամ մենախոսության է վերածվում, եւ եթե անգամ գրեթե չի լսվում, բայց քանդակագործը իր ձայնի, ժեստի լեզվով կարող է հաղորդակից դարձնել այն բոլոր ելեւէջներին, որ դարձդարձվում են նրա հոգեաշխարհում:

Այնուամենայնիվ, կարելի է փորձել պատկերացնել ներքին եւ արտաքին այն սահմանները, որ հատում է լիբանանահայ քանդակագործի երեւակայությունը ստեղծագործելիս, մանավանդ երբ արվեստի այս տեսակը լուրջ

խոչընդոտներ է հարուցում միջոցների սեղմությամբ, իսկ այդ հնարավորությունները Զավեն Խսրոյանը կարողանում է ընդլայնել՝ կենտրոնանալով կերպարայնության ներքին հատկանիշների վրա եւ դա արվում է ձեւածավալների սահուն անցումների եւ ճկուն փոփոխությունների շնորհիվ: Հայտնի է, որ արվեստագետի երեւակայությունը սնվում է նախ եւ առաջ ներքին մտածողական ակունքներից, երբեմն տարօրինակության աստիճան:

Քանդակային արվեստի այն ձեւերը, որով նա արտահայտում է իր գեղարվեստական վերաբերմունքը իրականությանն ու երեւույթներին, որոշակիության սահմանները վաղուց են խախտել: Ըստ որում անկախ թեմատիկ դրսեւորման, նա խնդիր ունի ոչ միայն հաղթահարելու նյութի դիմադրողականությունը, այլեւ նյութը՝ ինքը հաղթահարում է երկրային ծանրության բեռը՝ տեղափոխվելու ավելի եթերային հարթություն: Այս է պատճառը, որ նրա գրեթե բոլոր քանդակները ասես կտրված են հենման իրենց կետից, պատվանդանից եւ անպայմանորեն սլացքի, թռիչքի մեջ են («Թռչող հոլանդացին», «Աստարտե աստվածուհին»): Այսպիսի տպավորություն են թողնում իր մանրաքանդակների բնօրինակները այս օրերին Երեւանի պատմության թանգարանում ցուցադրվող, որոնք որքան էլ դեկորատիվ տարրեր պարունակող՝ օժտված են ներքին ընդգծված դինամիզմով եւ ուժեղ լիցքերով:

Իհարկե, Զավեն Խսրոյանի արտիստականությունը, արվեստագետի հոգու որակները դրսեւորվում են առավել մոնումենտալ գործերում, որոնք սրահում ներկայացված են մեծադիր լուսանկարների տեսքով: Նախապես դասական քանդակագործության ավանդույթներին հետեւած արվեստագետը շատ արագ անցում է կատարել քանդակային մտածողության այլափոխություններին, որտեղ ձեւերը դառնում են ավելի ազատ, որոնցում նրա ներքին մղումները, երեւակայությունը լիովին ձերբազատված են՝ գեղարվեստական պայմանականությունը դարձնելով արվեստի գլխավոր մոտիվը: Խսրոյանի քանդակային ողորկ մակերեսները իրենց դյուրաթեքության եւ ճկունության սլացքով օժտում են գործը նաեւ երաժշտականությամբ, քնարականությամբ, ինչն առկա է նրա բոլոր, անգամ ազգային ազատագրական թեմատիկայով արված աշխատանքներում («Մեծարանք Արցախի հերոսին», «Արցախի ազատագրումը՝ Սլացք-դրոշի պարզում»): Միով բանիվ, նա սիրում է աշխարհը գեղեցկության մեջ տեսնել, որովհետեւ հստակ են ընտրված ձեւերի խախտումների համաչափությունը, ներքին ներդաշնակությունը եւ ամբողջականությունը:

Զավեն Խսրոյանը Լիբանանում հայտնի արվեստագետ է, պրոֆեսիոնալ կրթությամբ քանդակագործ, ավարտել է Բեյրութի գեղարվեստի ակադեմիան, սովորել նաեւ Փարիզի ազգային բարձրագույն արվեստների դպրոցում: Լիբանանահայության համար հատկապես մեծ իրադարձություն էր 1965-ին Պիֆֆայայում Հայոց ցեղասպանության հուշակոթողի տեղադրումը, առաջինը՝ Լիբանանում: Բեյրության իր մեծարանքի երեկոյին, երբ նա Արամ Ա-ի հայրապետական կոնդակով պարգեւատրվեց Սուրբ Մեսրոպ Մաշտոց շքանշանով, նկատվեց, որ Պիֆֆայայի այս կոթողը «հիմնական պատճառ է, որ անոր արվեստը հավերժանա»: Իսկ հուշարձանը իսկապես որ մարդկային ապրումների, ցավի ու հիշողության, միաժամանակ ապրելու, գոյատեւելու անկոտրում կամքի, պրկված ուժի ու տոկունության խորհրդանիշ է, վեր ուղղված ձգտում, իղձ:

Հուշարձան՝ Ապրիլյան եղեռնի

80-ամյա արվեստագետը առաջին անգամ Հայաստանում է. օտարության մեջ ապրող որեւէ հայի համար սա երազանք է, արվեստագետի համար այս երեւույթը տարիներ շարունակ տեսիլք էր, ավելի շուտ որոշակի պատկեր, որ իրեն երեւում էր մայր մտնող արեւի վարդագունող հորիզոնի տեսքով, հորիզոն, որին չեն մոտենում. ինքը ահա վերջապես մոտեցավ, հատեց հորիզոնը, Երեւանի հյուրանոցի իր պատշգամբում առավոտյան սուրճ խմեց, հայացքի դիմաց՝ Արարատը: Երազը ավելին լինո՞ւմ է...

Իհարկե, նաեւ երեւանյան առաջին անհատական այս ցուցահանդեսը՝ սփյուռքի նախարարության «Լիբանանի հայ համայնքի օրերը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, շնորհավորանքներ, բարի խոսքեր ու հիշողություններ (Ռոմեն Կոզմոյանի եւ ուրիշների կողմից), նախարարի կողմից «Արշիլ Գորկի» մեդալով պարգեւատրում, նրա արվեստի ճանաչում, գնահատություն նաեւ հայրենիքում: Սրանից ավելի դեռ կան առաջարկներ, նոր մտահղացումներ, իղձեր...

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՀ

20-րդ հոբելյանականը

Ինչպես տեղեկանում ենք Հայաստանի ամերիկյան համալսարանից, այսօր, հունիսի 23-ին, ժամը 11:00-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) մեծ դահլիճում տեղի կունենա ՀԱՀ-ի շրջանավարտների 20-րդ հոբելյանական ավարտական արարողությունը:

Գործարար կառավարման, քաղաքագիտության եւ միջազգային հարաբերությունների, իրավագիտության, ճարտարագիտության, համակարգչի եւ տեղեկույթի գիտության, ինչպես նաեւ անգլերենը որպես երկրորդ լեզու մասնագիտությունների գծով մագիստրոսի աստիճան կստանան 170 շրջանավարտներ: Միջոցառմանը կմասնակցեն ինչպես 2012 շրջանավարտներն ու նրանց ընտանիքի անդամները, այնպես էլ պետական պաշտոնյաներ, ներկայացուցիչներ միջազգային կազմակերպություններից, հյուրեր սփյուռքից:

Ավարտական դասարանի եւ համալսարանի նախագահի, հոգաբարձուների եւ դասախոսական կազմի հանդիսավոր շքերթից, Գերաշնորհ Տ. Գեւորգ Եպիսկոպոս Սարոյանի օրհնության խոսքից հետո, ՀԱՀ ճարտարագիտության բաժնի հիմնադիր դեկան, հոգաբարձու, Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանի պրոֆեսոր դր. Արմեն Տեր Կյուրեղյանը կհաղորդի Կալիֆոռնիայի համալսարանի ողջույնի ուղերձը: Համալսարանի նախագահ դր. Բրյուս Պողոսյանը կներկայացնի համալսարանի հիմնական նվաճումները անցյալ ուսումնական տարվա ընթացքում ինչպես նաեւ համալսարանի զարգացման հեռանկարները առաջիկա տարիներին:

2012թ. ավարտական արարողության հիմնական բանախոսները կլինեն Վիվա Սել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն, պրն Ռալֆ Յիրիկյանը եւ Միացյալ Արաբական Էմիրությունների համալսարանի հումանիտար եւ հասարակական գիտությունների բաժնի դեկան՝ դր. Դենիս Լիվենը, որոնք իրենց խորհուրդն ու պատգամը կհղեն ավարտական դասարանին:

2012թ. ավարտական արարողությունից հետո ՀԱՀ շրջանավարտների ընդհանուր թիվը կգերազանցի 2200-ը: Վերջիններս զբաղեցնում են առաջատար պաշտոններ հանրապետության պետական կառույցներում, միջազգային եւ արտասահմանյան ներկայացուցչություններում, հասարակական կազմակերպություններում, ինչպես նաեւ մասնավոր ձեռնարկություններում:

Նույն օրը երեկոյան տեղի կունենա Հայաստանի ամերիկյան համալսարանի շրջանավարտների ավարտական հավաք-ճաշկերույթը: Ավանդական դարձած այս միջոցառմանը մասնակցում են նաեւ անցյալ տարիների շրջանավարտները, որոնք հավաքվում են՝ միմյանց հետ կիսելու իրենց հաջողությունները, շփվելու նոր ավարտողների հետ: Միջոցառումը շարունակական կապ է ստեղծում բոլոր նրանց միջեւ, ում համար համալսարանը դարձել է հարազատ ընտանիք:

Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկիայի նախարարության 12 դեկտեմբերի 2001 թ թիվ 465 հրամանով տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) հաշվետվության ներկայացման համար

Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. h 740 որոշմամբ սահմանված կազմակերպությունների վրա

Ձ– h. 1

Հաշվապահական հաշվեկշիռ
առ 01 հունվարի 2012թ.

		Ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	«Եվրոպարկ Առևտրի կենտրոն» ԲԲԸ	
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակը	1. Առևտրի իրականացման վայր	
Պետական ռեգիստրում գրանցման համարը		222.13024720
Հարկ վճարողի հաշվառման համարը		01849292
Չափի միավորը		Հազար դրամ
Գտնվելու վայրը	Ք.Երևան, Աթենքի 10	
Փաստացի գուծունեության վայրը	Ք.Երևան, Աթենքի 10	Հեռ. 010-58-72-21

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010		676238
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050		111552
	074		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվ	080	0	787790
II. Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160		690
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեյի գծով	170		4098
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	200		293
Ընդամենը ընթացիկ ակտիվներ՝	220	0	5081
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	0	792871

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (Բաժնեհավաք) Կապիտալի զուտ գումար	240		104700
Էմիսոն Եկամուտ	250		12509
Կուտակված շահույթ	270		-7178
Սեփական կապիտալի այլ տարրեր,այդ թվում՝	290		124019
Ընդամենը սեփական կապիտալ	300	0	234050
Ակտիվներին վերբերող շնորհներ	330		557171
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	0	557171
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390		532
Ստացած ընթացիկ կանխավճարներ	400		36
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410		954
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր սոց. Ապ. Գծով	420		128
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	0	1650
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	0	792871

Գլխավոր Տնօրեն *Ա.Աղաբաբյան*
Գլխավոր հաշվապահ *Շ.Սարգսյան*

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան աճողական)	Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացման հասույթ	010		23401
իրացված արտադրանքների, ապրանքների, աշխտանքների, ծառայությունների ինքնարժեք	020		
Համախառն շահույթ (վնաս)	030		23401
Իրացման ծախսեր	040		-137
Վարչական ծախսեր	050		-6487
Գործառնական շահույթ (վնաս)	090		16777
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140		16777
Արտաովոր դեպքերց շահույթ (վնաս)	150		
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութհարկի գծով ծախսի նվազեցումը	160		16777
Շահութհարկի գծով ծախս (փոխհատուցում)	170		629
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180		16,147

* Սույն հոդվածների լրացվումը պարտադիր է այն բաժնետիրական ընկերությունների կողմից, որոնց սովորական բաժնետոմսերը կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերը հրապարակայնորեն վաճառվում են կամ որոնք գտնվում են արժեթղթերի բաց (կանոնակարգվող) շուկայում սովորական բաժնետոմս

Գլխավոր Տնօրեն *Ա.Աղաբաբյան*
Գլխավոր հաշվապահ *Շ.Սարգսյան*

Էլինա Դանիելյանը բավարարվեց 6-րդ տեղով

Կազանում ավարտվեց շախմատի կանանց Գրան պրիի 4-րդ փուլի մրցաշարը: Յավոք մրցաշարի մեկնարկում հիանալի հանդես եկող Էլինա Դանիելյանը պարզապես ձախողվեց վերջնագծում՝ կրելով 3 անընդմեջ պարտություն եւ առաջին մրցանակի փոխարեն 6 միավորով բավարարվեց միայն 6-րդ տեղով: Ավարտական տուրում էլ Դանիելյանը պարտվեց աբխարհի չեմպիոնուհի Հոու Յիֆանին:

Մրցաշարի հաղթող ճանաչվեց հնդիկ շախմատիստուհի Համպի Կոներուն, որը հաղթելով Ալիսա Գալյամովային, վաստակեց 7,5 միավոր: Նույնպիսի արդյունքով 2-րդ տեղը գրավեց Աննա Մուզիչուկը, որը պարտության մատնեց Նադեժդա Կոսինցեւային: Լավագույն եռյակը եզրափակեց Վիկտորիա Չմիլիտեն, որը հաշտություն կնքելով Անտուանետա Ստեֆանովայի հետ, վաստակեց 7 միավոր: Նույնպիսի արդյունքով 4-րդ տեղում Հոու Յիֆանն է: 6 միավորով 5-րդ տեղում Ալեքսանդրա Կոստենյուկն է, որը հաղթեց Բեթուլ Յիլդիզին: Վերջինս 2,5 միավորով եզրափակեց աղյուսակը:

Ռոնալդուն չեխերին ստիպեց սափրվել

Քրիստիանու Ռոնալդուի խփած միակ գոլի շնորհիվ Պորտուգալիայի հավաքականը հաղթեց չեխերին եւ Եվրոպայի առաջնության մասնակիցներից առաջինը մտավ կիսաեզրափակիչ՝ նվազագույնն ապահովելով բրոնզե մեդալները: Կիսաեզրափակիչում պորտուգալացիների մրցակիցը հայտնի կդառնա այսօր կայանալիք Իսպանիա-Ֆրանսիա հանդիպումից հետո: Պորտուգալացիների մասնակցությամբ կիսաեզրափակիչ խաղը տեղի կունենա հունիսի 27-ին, Դոնեցկում:

«Կարծում եմ, մենք շատ լավ խաղացինք: Մեր թիմը գոլային շատ պահեր ստեղծեց: Գլխավոր խնդիրը կիսաեզրափակիչ մտնելն էր: Գոհ ենք, որ առաջադրանքը կատարվեց: Գիտեինք, որ ծանր խաղ է լինելու, սակայն վստահ էինք մեր ուժերին եւ պատրաստ մրցակցությանը: 2 անգամ գնդակը դիպավ դարպասաձողին: Ուրախ եմ, որ ի վերջո ինձ հաջողվեց գրավել դարպասը», խաղից հետո նշել է Ռոնալդուն:

Ահա եւ մարզիչների կարծիքը:

Պաուլու Բենտու (Պորտուգալիա) - Մենք լավ ֆուտբոլ ցուցադրեցինք: Խաղասկիզբը հաջող չդասավորվեց մեզ համար. խնդիրներ կային հարձակման գծում եւ գնդակին տիրելիս: Հետո ամեն ինչ իր տեղն ընկավ, լավ էր ստացվում պատշտպանությունից հարձակման անցնելը: Թեեւ չեխերը մեզանից մեկ or ավելի էին հանգստացել, սակայն չկարողացան գոլային պահ ստեղծել: Այժմ մեկնում ենք Դոնեցկ, որտեղ կփորձենք հաղթել ֆրանսիացիներին կամ իսպանացիներին: Նման բարձր մակարդակի մրցաշարերի կիսաեզրափակիչում մշտապես ուժեղ հավակներներ են հանդես գալիս: Կարիք չկա մրցակցին ընտրելու: Այժմ հարկավոր է վերականգնվել եւ լավագույն մարզավիճակով ներկայանալ կիսաեզրափակիչ խաղին: Ես վստահ եմ սաներիս վրա:

Միխալ Բիլեկ (Չեխիա) - Պորտուգալացիները հիանալի հարձակման գիծ ունեն: Մենք փորձում էինք հարձակվողներին դիմագրավել ու բավականին ժամանակ դա մեզ հաջողվում էր: Մի ֆանի անգամ էլ մեզ փրկեց Չեխը: Սակայն հետագայում հոգնածությունը զգալ տվեց ու ֆուտբոլիստները կորցրին զգոնությունը: Արդյունքում մեկ պահը վճռեց հանդիպման ելքը: Խաղից անմիջապես հետո հիասթափված էինք, ֆանի որ կարող էինք նաեւ մենք հաղթել: Իսկ այժմ միայն կարող եմ շնորհակալություն հայտնել ֆուտբոլիստներից: Պորտուգալացիները մեզանից ուժեղ էին: Մեզ համար քառորդ եզրափակիչ մտնելն արդեն հաջողություն էր: Ռուսներից ջախջախիչ պարտություն կրելուց հետո հավաքվեցինք եւ 2 հիանալի խաղ ցուցադրեցինք: Եթե որեւէ մեկն ինձ ասեր, որ 8 ուժեղագույնների մեջ ենք ընդգրկվելու, չէի հավատա: Հպարտանում եմ իմ թիմով, գոհ եմ հավաքականի ելույթներից: Մենք հիանալի մթնոլորտով գերազանց հավաքական ենք կազմավորել, որը բնավորություն դրսեւորեց:

Տեղեկացնենք, որ Չեխիայի հավաքականի ֆուտբոլիստները Եվրոպայի առաջնությունից առաջ որոշել էին չսափրվել, ֆանի դեռ դուրս չեն մնացել մրցաշարից: Եվ ահա նրանցից ոմանք խաղից հետո, արդեն հանդերձարանում սափրվեցին: Նրանց թվում էր դարպասապահ Պետեր Չեխը, որին չհաջողվեց թիմին փրկել Ռոնալդուի դիպուկ հարվածից:

ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ

Առջեւում Վրաստանի շախմատիստներն են

Ջերմուկում ընթացող Կարեն Ասրյանի հուշամրցաշարի 6-րդ տուրում ուշադրության կենտրոնում առաջատարների մրցավեճն էր: Աղյուսակը գլխավորող Դավիթ Հարությունյանը հաղթեց Տիգրան Ս. Պետրոսյանին եւ 5,5 միավորով ամրապնդվեց առաջին հորիզոնականում: Նրան կես միավոր է զիջում Վրաստանի մեկ այլ ներկայացուցիչ՝ Կոնստանտին Շանավան, որը պարտության մատնեց Սամվել Տեր- Սահակյանին:

4,5-ական միավորով 3-4-րդ տեղերն են բաժանում Հրանտ Մելքումյանն ու Ավետիք Գրիգորյանը, որոնց մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի: Մրցաշարային վիճակը բարելավեցին Զավեն Անդրեասյանը, Լիլիթ Մկրտչյանը եւ Արտաշես Մինասյանը, որոնք հաղթանակներ տոնելով, վաստակեցին 4-ական միավոր: Զավենը պարտության մատնեց Դավիթ Լոմսաձեին, Լիլիթն առավելության հասավ Արման Միքայելյանի նկատմամբ, իսկ Մինասյանը հաղթեց Արման Հայրապետյանին: Տուրը հաղթական էր նաեւ գրոսմայստեր Եվգենիա Դոլուխանովայի համար, որը պարտության մատնեց Ռաֆիկ Խաչատրյանին ու վաստակեց 2,5 միավոր: Նույնպիսի արդյունք ունի նաեւ Էդուարդ Մնացականյանը շնորհիվ Հասմիկ Շահբազյանի նկատմամբ տոնած հաղթանակի:

7-րդ տուրում հետաքրքրություն են ներկայացնում Շանավա-Հարությունյան, Մելքումյան-Անդրեասյան, Տեր-Սահակյան-Գրիգորյան, Մկրտչյան-Քոթանջյան, Գուրամիշվիլի-Մինասյան պարտիաները:

Մխիթարյանի հաղթարավը կանգնեցվեց

Չեխիայի Տեպլիցե քաղաքում շարունակվող շախմատի մրցաշարի 6-րդ տուրում մրցավեճի էին բռնվել 2 առաջատարները՝ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանն ու Վլադիմիր Սերգեեւը, որոնք մինչ այդ 5 անընդմեջ հաղթանակ էին տոնել: Յավոք բրազիլահայ շախմատիստն անհաջողության մատնվեց՝ կրելով առաջին պարտությունը: Այդ հաղթանակի շնորհիվ ուկրաինացի Վլադիմիր Սերգեեւը 6 միավորով միանձնյա գլխավորեց աղյուսակը: Մխիթարյանին շրջանցեց նաեւ նրա հայրենակից Ալեքսանդր Ֆիեռը, որը հաղթելով Բորիս Չաթալբաշեւին, վաստակեց 5,5 միավոր: Մխիթարյանը Լուկաս Կեռնոուսեկի եւ Դենես Բորոշի հետ 5 միավորով բաժանում է 3-5-րդ տեղերը:

7-րդ տուրում Մխիթարյանը սպիտակներով կխաղա Կեռնոուսեկի հետ, իսկ Սերգեեւի մրցակիցը կլինի Ֆիեռը:

«Գանձասարը» համալրում է կազմը

Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խաղարկությանը նախապատրաստվող Կապանի «Գանձասարը» նոր համալրումներ է ստացել: Ակումբի հետ մեկամյա պայմանագիր են կնքել «Ուլիսի» նախկին լեգեոնական Գեորգի Կրասովսկին եւ Ռեջիլիո Զեեդորֆը, որը հանրահայտ Կլարենս Զեեդորֆի եղբորորդին է:

Վերջապես լուծվել է մալիացի Դումբայի տրանսֆերի հարցը: Գրեթե մեկ տարի «Գանձասարում» մարզվող մալիացի այս ֆուտբոլիստը չէր կարողանում մասնակցել պաշտոնական հանդիպումներին, քանի որ Լիբիայից, որտեղ նա հանդես է եկել, նրա տրանսֆերային փաստաթղթերը չէին ուղարկել: Փոխարենը «Գանձասարը» հրաժարվել է մոլդովացի հարձակվող Սերգեյ Չույկոյի եւ ռուսաստանցի Սերգեյ Ավակիմյանի ծառայություններից: Չի բացառվում, որ թիմից հեռանան եւս մի քանի ֆուտբոլիստներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
Երեւան, Գ. Լուսավորչի 15/1
Հեռ. (37410) 58-07-45
Ֆաքս. (37410) 52-69-41
N 06-Ե-04
14.06.2012 թ.
Անկախ աուդիտորական եզրակացություն
Ներկայացվում է «ՀԱԷԿ» ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովին

Մեր կողմից իրականացվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2011-ի դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման հաղորդականության հիմնական դրույթները եւ այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի առյուծում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները եւ պլանավորել եւ անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների եւ սխալների հետեւանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատականներից: Ռիսկերի գնահատականները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների եւ ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիքի ձեւափոխման հիմքեր

1. Ընկերության կողմից չի պահպանվել ՀՀՄՍ 16 ստանդարտի պահանջը, որի հետեւանքով Ընկերությանը պատկանող 36628530.0 հազ. դրամ սկզբնական արժեք ունեցող հիմնական միջոցներից 788187.0 հազ. դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցները 31.12.2011 թ. դրությամբ հաշվեկշռային արժեք չունեն:

2. ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ առկա հիմնական միջոցների մասնաբաժնը եւ հաշվեկշռային արժեքները ներկայացվել են որպես ՖՀՄՍ-ների պահանջներին համապատասխանող, սակայն այդպիսի հաշվարկներ (հիմնավորումներ) ընկերությունում չեն կատարվել:

3. Խախտվել է ՀՀՄՍ 40 ստանդարտի պահանջները եւ վարձակալությամբ տրամադրված անշարժ գույքը չի ճանաչվել որպես ներդրումային գույք:

4. ՀՀ կառավարության 31.12.2000 թ. N 902 որոշմամբ նախատեսված միջուկային (ռադիոակտիվ) նյութերի հատուկ կարգով տեղափոխման վերաբերյալ փաստաթղթեր աուդիտի իրականացման ընթացքում մեզ չեն ներկայացվել:

5. Հաշմանդամ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված՝ ՀԱԷԿ-ի 2011 թ.-ի էլեկտրաէներգիայի եւ հզորության հաշվարկների, ընկերությունը պետք է ապահովագրական պահուստին կատարեր հատկացումներ 150.0 մլն դրամի չափով, որը չի կատարվել:

6. Վիեննայի Կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն շահագործող կազմակերպությունը պետք է ապահովագրի միջուկային վնասը եւ ապահովի ֆինանսական միջոցներով իր պատասխանատվությունը այն չափով, ձեւով եւ այն պայմաններով, ինչպես որ կսահմանի պետությունը: Ընկերությունը չի ապահովագրել միջուկային վնասը եւ ապահովել ֆինանսական միջոցներով իր պատասխանատվությունը այն չափով, ձեւով եւ այն պայմաններում, ինչպես որ կսահմանի պետությունը, այսինքն չի կատարվել Վիեննայի Կոնվենցիայի պահանջները:

Ձեւափոխված կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ կարծիքի ձեւափոխման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցերի հետեւանքների, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ ֆինանսական վիճակը եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները եւ դրամական հոսքերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

Տնօրեն Կ. Սարգսյան
Աուդիտորէ. Համբարյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

ԱԿՏԻՎՆԵՐ	31 դեկտ. 2009	31 դեկտ. 2010	31 դեկտ. 2011
Ոչ ընթացիկ ակտիվներ	20,131,569	21,813,119	23,732,953
Հիմնական միջոցներ	15,729,697	17,240,595	16,831,185
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	2,131,836	2,244,693	2,668,244
Ոչ նյութական ակտիվներ	266,090	192,775	285,455
Հետաձգված հարկային ակտիվներ	672,415	609,540	895,634
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում			9,356
Տրված ոչ ընթացիկ կանխավճարներ	1,165,281	1,303,016	2,809,329
Այլ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	166,250	222,500	233,750
Ընթացիկ ակտիվներ	16,068,855	18,810,956	20,848,107
Պաշարներ	13,426,617	16,297,364	16,639,133
Տրված կանխավճարներ	48,185	201,983	43,477
Առեւտրական դեբիտորական պարտքեր	1,860,745	1,908,573	2,512,576
Հարկային գերավճարներ եւ կանխավճարներ	71,757	30,270	1,157
Այլ դեբիտորական պարտքեր	468,802	303,647	725
Այլ ընթացիկ ակտիվներ	181,126	53,965	50,739
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	11,623	15,154	1,600,300
Ընդամենը ակտիվներ	36,200,424	40,624,075	44,581,060
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**31 դեկտ. 2009**	**31 դեկտ. 2010**	**31 դեկտ. 2011**
Կանոնադրական կապիտալ	10,747,746	10,747,747	9,247,849
Կուտակված շահույթ (վնաս)	-1,910,689	-1,851,177	-951,261
Սեփական կապիտալի այլ տարրեր	954,943	954,943	954,943
Ընդամենը սեփական կապիտալ	9,792,000	9,851,513	9,251,531
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ փոխառություններ	1,637,973	1,574,945	1,511,991
Հետաձգված հարկային պարտավորություններ	95,192	0	0
Ակտիվներին վերաբերող շնորհներ	4,226,820	6,842,123	7,082,189
Երկարաժամկետ պահուստներ	15913100	15410162	16,537,555
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	21,873,085	23,827,230	25,131,735
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	1,000,443	653,539	0
Կարճաժամկետ փոխառություններ	467,825	1,331,542	4,586,000
Առեւտրական եւ այլ կրեդիտորական պարտքեր	2,131,411	3,889,267	4,072,191
Պարտավորություններ աշխատավարձի գծով	260437	263185	279,141
Պարտավորություններ սոցիալական ապահովության վճարների գծով	49704	50812	47,691
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		144257	273,073
Այլ հարկերի եւ վճարների գծով պարտավորություններ	282314	38929	427,673
Կարճաժամկետ պահուստներ	343205	573801	512,025
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	4,535,339	6,945,332	10,197,794
Ընդամենը պարտավորություններ	26,408,424	30,772,562	35,329,529
Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ	36,200,424	40,624,075	44,581,060

Գլխավոր տնօրեն ***Մարկոսյան Գագիկ***
Գլխավոր հաշվապահ ***Աբրամյան Էդվարդ***

N	Շահույթ եւ վնասի բաղադրիչներ	01.01.2010-31.12.2010	01.01.2011-31.12.2011
1.	Հասույթ	17,228,518	19,774,165
2.	Վաճառքի ինքնարժեք	(15,680,128)	(19,120,386)
3.	Համախառն շահույթ	1,548,390	653,779
4.	Այլ եկամուտ	754,945	1,487,198
5.	Իրացման ծախսեր		
6.	Վարչական ծախսեր	(1,115,388)	(992,194)
7.	Այլ ծախսեր	(735,445)	(1,191,157)
8.	Ֆինանսական ծախսումներ	(46,819)	(62,420)
9.	Շահույթ մինչեւ հարկումը	405,683	-104,794
10.	Շահութահարկի գծով ծախս	(346,171)	(276,823)
11.	Ժամանակաշրջանի շահույթ շարունակվող գործունեությունից	59,512	-381,617
12.	Ժամանակաշրջանի ՇԱՀՈՒՅԹ	59,512	-381,617
13.	Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
14.	Գույքի վերագնահատումից եկամուտ		
15.	Շահութահարկ՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչների գծով		
16.	Ժամանակաշրջանի այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ հարկումից հետո	0	0
17.	Ժամանակաշրջանի ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ	59512	-381617

Գլխավոր տնօրեն ***Մարկոսյան Գագիկ***
Գլխավոր հաշվապահ ***Աբրամյան Էդվարդ***

Հայտարարություն

2012 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում (f. Եր ան, Մելիք-Ադամյան 1) տեղի կունենա «Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզավորման» հանձնաժողովի հերթական նիստը:

Օրակարգում՝

1-6. «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետով սահմանված պահանջը խախտելու համար «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի, «ՀԱՅԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի, «ՓՐԱՅՍՈՒՈԹԵՐՀԱՈՒՍ-ԿՈՒՊԵՐՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի, «ԷՆ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի, «ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի, «ԼՈՆԴՈՆ ԲԻԶՆԵՍ ԳՐՈՒՊ» ՀՁ ՍՊԸ-ի նկատմամբ հարուցված վարչական վարույթների վերաբերյալ գործերը:

7. Աուդիտոր Ռուսլան Խորոշվիլու որակավորման վկայականի (տրված 10.11.2011թ. թիվ 216) գործողությունը «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 24.1 հոդվածի 1-ին մասի «զ» կետի համաձայն դադարեցնելու վերաբերյալ հարցը:

ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հասատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 19-ի թիվ 1 որոշմամբ

Ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ՊԲԱՊՁԲ - 63/12

Պատվիրատուն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի կարիքների համար **ռելեների** մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում **ռելեների** մատակարարումը:

Գնումը ֆինանսավորելու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշվով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2012թ. սեպտեմբերի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, հաղորդակցություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 11:30-ը: Պարզեցված ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: **Ռուսերենով կամ անգլերենով հրավերի տրամադրման համար գանձվում է լրացուցիչ վճար 250.000 դրամի չափով: Հրավերը տրամադրվում է այդպիսի պահանջ ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:** Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալու օրվա ընթացքում պարզեցված ընթացակարգի հրավերը տրամադրել պարզեցված ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 11:30 և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար Պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը Պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձևով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն

ՕՐԱԿԱՐԳ

2012թ. հունիսի 29-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) կայանալիք վիճակախաղերի, շահումով խաղերի խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստի

▼ «Լառա Արմինե» ՍՊԸ (ՇԽ-237 լիցենզիա) «ՌՈՒՍՏԱՐ»ՍՊԸ (ՇԽ-248 լիցենզիա) կողմից ներկայացված շահումով խաղերի կազմակերպման անցկացման կանոնակարգերին համաձայնություն տալու հարցերի քննարկում:

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հավելված N 1
ՀՀ արդարադատության նախարարի
2009 թվականի դեկտեմբերի 22-ի
N 319-Ն հրամանի

ՁԵՎ

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 21ե հունիսի 2012 թ. որոշմամբ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«ՔՎԱՆՏ ՎԱՐԺԱՐԱՆ» կրթական հիմնադրամի
2011 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝	«Քվանտ վարժարան» կրթական հիմնադրամ
1.1. Գրանցման համարը՝	222.160.01203
1.2. Գրանցման ամսաթիվը՝	23.04.2010թ.
1.3. Գտնվելու վայրը՝	ք. Երեւան, Բագրատունյաց 23/2
1.4. Հեռ.	(010) 46-03-91
1.5. Բջջ.	(094) 20-84-28
1.6. Կայք	չունի
1.7. Էլ.փոստ	info@quantum.am

Հիմնադրամը չի գործել, գույք չի օգտագործվել, ծրագրեր չեն իրականացվել, ֆինանսական հոսքեր չեն եղել:

Հիմնադրամի տնօրեն
Անուն ազգանուն Մասիս Սարգսյան



«Վիկտորիա» կոնցեռնը

արտադրության տեսականին փոխելու պատճառով հայտարարում է ակցիա եւ վաճառում է «Ամորովիտ» ձկան կեր (N 3)1 կգ 550 դրամ, ներառյալ ԱԱՀ

Հեռ. 58-39-96, (099) 28-82-99

Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ N 081՝
տրված ՀՀ ֆինանսների նախարարության կողմից
«ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երեւան, Վ. Սարգսյան 26/3
Անկախ Աուդիտորի եզրակացություն
«Մուզ» ՍՊԸ-ի մասնակիցներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Մուզ» ՍՊԸ-ի կից ներկայացված կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման քաղվածքների ամփոփ նկարագիրը եւ այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետեւանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում եւ պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն եւ կիրառում, ինչպես նաեւ տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պարականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետեւանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, ղեկավարության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ՝ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիքի ձեւափոխման հիմքեր

Ընկերության անտոկոս երկարաժամկետ փոխառությունները հաշվապահական հաշվեկշռում ներկայացված են 552,398 հազար դրամ գումարով: Ղեկավարությունը փոխառությունները սկզբնական ճանաչումից հետո չի ներկայացրել ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, ինչը հանդիսանում է եղծում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներից: Ընկերության հաշվապահական տվյալները մատնանշում են, որ եթե ղեկավարությունը փոխառությունները ներկայացներ իրական արժեքով, ապա կպահանջվեր փոխառությունների սկզբնական արժեքը նվազեցնել 112,030 հազար դրամ գումարով:

Խախտվել է ՀՀՄ թիվ 19-րդ «Աշխատակիցների հատուցումներ» ստանդարտի 8-րդ կետի ա) ենթակետի եւ 14-րդ կետի պահանջները, համաձայն որոնց «Կազմակերպությունը պետք է չափի կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները որպես լրացուցիչ գումար, որը կազմակերպությունն ակնկալում է որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք»: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 23,998 հազար դրամ:

Ձեւափոխված կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ կարծիքի ձեւափոխման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցի հետեւանքների, կից ֆինանսական հաշվետվությունները ճշմարիտ են ներկայացնում 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Մուզ» ՍՊԸ-ի ֆինանսական վիճակը եւ նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները ու դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

18 հունիսի, 2012 թ.

Խաչիկ Բեգլարյան — ***Գլխավոր տնօրեն-բաժնետեր***

Արթուր Կիրակոսյան — ***Խմբի ղեկավար-բաժնետեր***

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
31 դեկտեմբերի 2011 թ.

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	31 դեկտեմբեր 2011	31 դեկտեմբեր 2010	01 հունվար 2010
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4	827,309	760,568	836,449
Ոչ նյութական ակտիվներ	5	1,069	897	1,036
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	6	26,710	26,710	26,710
		855,088	788,175	864,195
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	7	509,746	357,166	198,472
Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր	8	232,347	172,992	117,233
Դրամական միջոցներ	9	84,691	31,972	27,973
		826,784	562,130	343,678
Ընդամենը ակտիվներ		1,681,872	1,350,305	1,207,873
Սեփական կապիտալ եւ պարտավորություններ				
Սեփական կապիտալ				
Կանոնադրական կապիտալ	10	37,500	37,500	37,500
Պահուստային կապիտալ	11	5,625	5,625	-
Կուտակված շահույթ		417,393	381,814	348,723
Սեփական կապիտալի այլ տարրեր		-	4,270	4,270
		460,518	429,209	390,493
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Երկարաժամկետ փոխառություններ	12	611,898	413,898	463,898
Երկարաժամկետ բանկային վարկեր	13	473,146	430,187	244,628
		1,085,044	844,085	708,526
Ընթացիկ պարտավորություններ				
Կարճաժամկետ բանկային վարկեր	13	67,354	-	-
Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր	14	68,956	77,011	108,854
Շահութահարկի գծով պարտավորություն		-	-	-
		136,310	77,011	108,854
Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ		1,681,872	1,350,305	1,207,873

Մարկոս Մկրտչյան — ***Տնօրեն***

Արսեն Հովհաննիսյան — ***Գլխավոր հաշվապահ***

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2011 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	15	1,834,379	1,218,464
Վաճառքի ինքնարժեք	16	(1,524,333)	(989,976)
Համախառն շահույթ		310,146	228,488
Այլ եկամուտ	17	36,954	1,857
Իրացման ծախսեր	18	(110,877)	(87,609)
Վարչական ծախսեր	19	(69,471)	(43,289)
Այլ ծախսեր	20	(40,341)	(9,450)
Գործառնական գործունեությունից շահույթ		126,411	89,997
Ֆինանսական հոդվածներ	21	(79,872)	(44,821)
Շահույթը մինչեւ հարկերը		46,539	45,176
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	22	(15,230)	(6,460)
Տարվա զուտ շահույթ		31,309	38,716
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		31,309	38,716

Մարկոս Մկրտչյան — ***Տնօրեն***

Արսեն Հովհաննիսյան — ***Գլխավոր հաշվապահ***

Լրատուական գործունեութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 22.6.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: